1-47

ԻՆՉ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Pessimist

ԽԻՐԱՏ
ԷԼԵԲՐԱՅԱՐՄ ՏՊԱՐԱՆ ՍՊ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ ՊՈՒՐԽԻ
1910

2001

3
Ի-681
300
1572-ՊԵ

ԻՆՉ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1003
19392

Pessimist

[= Բանիկ՝ իշխանէանէ]

11570

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷԿՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՍ. 7
1909

05 OCT 2015
64 27-ԱՀ
300
15 Հ-ԱԳ

12322

Հայի անցեալ ու ներկայ կուլտուրան փոքրի շատ բարբեխիզ դիտողը կնկատէ, որ այդ կուլտուրայի մէջ կարմիր թելի նման անցնում է մի գիծ—այդ նմանողութեան գիծն է։ Եթէ յիրաւի մարդկային կուլտուրայի զարգացման · գործում պատմաբանները պէտք է ազգերից ոմանց ստեղծագործող, ոմանց նմանող, կատարելագործող և ոմանց էլ տարածող ածականով բնութագրեն ընդհանրապէս, ապա մեր ազգը նմանող ազգերի շարքն է անցնելու։ Նա իւր ունեցած կուլտուրայի մէջ համարեա՛ ինքնուրոյն բան չի ստեղծել, բաւականացել է իւր դարաւոր մարախրոսազրութեան ընթացքում միայն ուրիշ ազգերից վերցնել իրեն մատչելի նիւթը՝ նմանել եղածին որքան այդ հնարաւոր էր իւր համար։ Անշուշտ նմանողութիւնը մարդկային հոգուն յատուկ մի յատկութիւն է և իւր հերթին շատ անգամ նպաստաւոր զարգացման համար։ Եւ ով կարող է այս խորը արմատ ունեցող և յանախ, լաւ գործադրութեան դէպքում օգտաւէտ, հոգեկան ընդունակութեան դէմ բողոքել։ Խնդիրը այն է, թէ ինչ երևոյթների է նմանում մարդ, ո՞ր աստիճան գիտակցական է այդ նմանողութիւնը և որքան խորն է ըմբռնուած նմանուելիք երևոյթը։

Ուշադրութեան նիւթ դարձնելով մեր կուլտուրան՝ նկատում ենք, որ նա մեծ մասամբ իսկապէս նմանողական է. բայց որքան անցեալի վերաբերմամբ պէտք է խոստովանել, որ այդ նմանողութեան մէջ մարդիկ եղել են բարեխիզ և հեռատես, նոյնքան ներկայումս թեթևակի և վայր ի վերոյ վերաբերմունք են ցոյց տալի դէպի նմանուելիք երևոյթը։ Ով մեզանից չի խոստովանի, որ մեր բոլորիս ուշքը, կուլտուրան զարգաց-

նելու տեսակէտից, ուղղուած է դէպի Եւրոպան, որովհետև մեր մէջ չկայ այնքան ոյժ, այնքան պատրաստութիւն, որ անկախ ստեղծագործութեան ուղիով գնայինք. սակայն որ բարեխիղճ քննադատը չի նկատի, որ մեր նմանողութեան գործում էլ մենք անպատրաստ, թերի ենք, ու Կրիլովի հեռաքրքիր դերում ենք—գնդասեղի չափ փոքր դեռունները նկատում ենք, իսկ վիթխարի փղի մօտից անցնելով ուշք էլ չենք դարձնում նրա վրայ։ Այս վնասակար անուշադրութեան հիմքը ոչ միայն մեր ընդհանրապէս աչքի ընկնող ընդունակութիւններից զուրկ լինելու մէջ պէտք է փնտրենք, այլ նաև մեր անպատրաստութեան մէջ։ Մի երևոյթ հասկանալու համար հարկաւոր են՝ ընդունակութիւն և պատրաստութիւն. երբ այս երկու անհրաժեշտ պայմանները բացակայում են, անխուսափելիօրէն երևոյթը կամ կիսատ է հասկացւում կամ նոյն իսկ սխալ։

Մեր վերջին տարիների կուլտուրական գործը քննելիս նկատում ենք, որ կարծես թէ մեր մտաւորականները հասարակական գործի մէջ մտնելիս չեն ուզում հաշիւ տալ, թէ որքան իրենք ընդունակ են կամ որքան պատրաստութիւն ունին արդէն անհրաժեշտութիւն դարձած մնանողութեան գործը բարեխիղճ և գիտակցօրէն առաջ տանել։ Որ մեր գործը կուլտուրայի զարգացման դէպքում այժմ Եւրոպայի կուլտուրային նմանելն է և այդ կուլտուրան մերովսանն իրագործելը, այդ փաստը անվիճելի է, բայց որ մենք անհրաժեշտ ու կարևոր երևոյթներին նմանելը թողած՝ մանր մունր և շատ անդամ խարուսիկ, շլացուցիչ երևոյթների ենք աշխատում նմանել, դրան թող պերճախօս վկայ լինի մեր զուր տեղը մեծ աղմուկ բարձրացնող մամուլը։

Քանի տարի է, որ մեր հասարակական գիտակցութեան արթնանալու, բողբոջելու և ծաղկելու համար մեր մամուլը շեփոր է փչում, թմբուկ է զարկում. ի՞նչ է սակայն այդ շեփորի ձայնը—մեծ մասամբ մի օրհներգութիւն ուղղուած աշխատաւոր դիւցազութեան և իրաւազուրկ ու ընչազուրկ բանուորութեան հասցէին, որոնք սակայն դժբաղդաբար ոչ լսում են այդ օրհներգը և ոչ էլ մի շօշափելի օգուտ ստանում։ Տեսնում

ենք, որ մեր հասարակութեան ղեկավար տիպերով պսակուածները իրենց հոգացողութեան մենաշնորհ դարձած նիւթի հետ մեծ մասամբ կամ ծանօթ չեն կամ սխալ են ըմբռնում։ Հասարակութիւնը նրանց կարծիքով կամ աշխատաւոր դիւցազութիւնն է, կամ չորրորդ դասակարգ բանուորութիւնը. կամ միւս ծայրահեղութիւնը՝ վարձկան բանուորի քրտինքով հարստացող բուրժուազիան։ Նայեցէք մեր գրականութիւնը և կրտեսնէք, որ 5—15 կոպէկանոց թարգմանական բրոշիւրներով է ողողուած դասակարգային խնդրի վերաբերեալ։ Մարդիկ այն աստիճանի միակողմանիացել, մանր խնդիրներով տարուել, խճճուել են, որ էականն ու կարևորը վաղուց անուշադրութեան են մատնուել։ Այս հանգամանքը ես բացատրում եմ նրանով, որ մենք մեր նմանողութեան գործում անգամ անբարեխիղճ, տկար ու թեթևամիտ ենք, որ գոնէ փոխ առնելու դէպքում լաւի ու վատի, կարևորի ու երկրորդականի խիստ զանազանութիւն չենք դնում։ Որքան մարդու պատրաստութիւնը քիչ է, որքան մարդ զուրկ է խոր ընդունակութիւնից, նոյնքան նա մի երևոյթի երկրորդական, մանր ու անկարևոր կողմերին է աշխատում նմանել. ես առաւել նոյնը կարելի է ասել մի ազգի՝ ուրիշի կուլտուրային նմանելու խնդրում։ Դժբախտաբար, հասարակութեան ղեկավարները իրենց թիւր և միակողմանի գործերի պատասխանատուութիւնից ազատ են և օգտուելով իրենց բացառիկ արտօնութիւնից, ի չարն են գործ դնում ուրիշների բարեմտութիւնը։

Շատ անդամ է լսուում, որ հայ մտաւորականը և մանաւանդ նոր, սկսնակ սերունդը չի հետաքրքրում մայրենի գրականութիւնով և գիտութիւնով, բայց թող այդ ֆիլիպիկա կարդացողը հանդէս գայ և մատնանիշ անէ այն նիւթերը, որոնցով նա ուզում է սերունդ կրթել, այն գրքերը, որով հայ մտաւորականը հնարաւորութիւն ունի բարեխղճօրէն իւր հոգեկան ու մտաւոր պաշարը հարստացնելու և իրացնելու, երբ չորս կողմդ մեծ մասամբ բրոշիւրներ են, երբ եղած աշխատանքները դասակարգային գիտակցութեան պրիզմայից են անցկացրուած, այն ժամանակ ինքնաճանաչ մտաւորականը

իւր զարգացման ու յառաջադիմութեան նախանձից դրդուած ակամայից ուշքը դարձնում է օտար լեզուով եղած գրականութեան և օտարի կուլտուրայի մէջ է փնտրում իրեն հետաքրքրող հարցերի լուծումը։ Տուէք նրան լուրջ, քննական, թեկուզ թարգմանական, գրականութիւն, լայն, առողջ գաղափարներ մատակարարող գրքեր, որ նա իւր հետաքրքրութեան կենդրոնը հայ գրականութիւնը դարձնի։ Վերցրէք մեր դպրոցները օրինակի համար և կտեսնէք, որ իւրաքանչիւր ուսուցիչ ոչ միայն ստիպուած է աշակերտների ինքնազարգացման համար մատաժելու դէպքում օտար լեզուով գրքեր առաջարկել ընթերցանութեան համար, այլ և շատ անգամ օտար լեզուով ձեռնարկները դարձնել դասագրքեր։

Մասնաւորելով խօսքս նկատեմ, որ այս վերջին 4—5 տարիների ընթացքում մեր գրականութիւնը ոչ միայն չի տուել, այլ և խնդիր չի բարձրացրել այն առթիւ, որ լուրջ քննութեան առնուի բոլորովին աւելի քան անհրաժեշտ «ինչ է հասարակութիւն» երևոյթը։ Ամեն օր կկարդաք թերթերում յանուն հասարակութեան կատարուած գործեր, հասարակութեան հասցէին ուղղուած, երբեմն չափաւորութեան սահմանից դուրս մեղադրականների շարքեր. կտեսնէք որ հասարակութիւնը օգնութեան է կանչուում մեծ, հասարակական գործչին պատուելու, որքան կարելի է շատ փող տալով նրան և այլն։ Բայց ով է մինչև այժմ կարդացել հէնց այդ աղմկարար թերթերում, թէ ինչ է ինքը այդ հասարակութիւն ասածդ, ինչպէս է կազմուում, ինչ օրէնքներ են իշխում նրա զարգացման մէջ, որոնք են նրա յառաջադիմութեանը նպաստող հանգամանքները և ինչ պայմաններ արդեօք են հանդիսանում նրա զարգացման ընթացքում։ Այս հիմնական ու անհրաժեշտ հարցերը երբ պարզ չեն, երբ քննութեան առարկայ չեն դարձել հասարակութեան մէջ, կարելի՞ է այդ հասարակութեան անդամներին դնահատութեան այս կամ այն չափի տակ դնել և որքան բարեխիղճ են այդպիսի հասարակութեան «գործիչները»։ Մեր հասարակութիւնն էլ դարձեալ հովերով կենդանացաւ, բայց արթնանալուց յետոյ իր առաջ տեսաւ միայն անապատ, որտեղ մշակողների ու լուրջ դեկավարների բացակայութիւնը խիստ աչքի էր ընկնում։

Ժամանակ է վերջապէս լուրջ, խոհեմ աշխատանք սկսելու այս հարցի համար։ Գուցէ մեզանում դեռ չունենք ծեռնհաս ու պատրաստի անձինք, որ կարողանան ինքնուրոյն կերպով մշակել այս խնդիրը, այն ժամանակ դիմենք օտար գրականութեան, թարգմանենք, փոխադրենք աչքի ընկնող հեղինակների գրուածքները, տանք վերջապէս այս ամենից առաջ լուծուելիք խնդրի բացատրութիւնը, եթէ ուզում ենք իսկապէս մեր դոյութեան իրաւունքը պաշտպանած լինել գիտակցական կերպով։

Իմ նպատակն է այստեղ առնուազն այս խնդրի կարեւորութիւնը շեշտել և տալ քաղուածօրէն եղած լուծումներից ամենաաչքի ընկնողները։ Պարտք եմ համարում յիշելու, որ ես հիւսում եմ այն մտքերն ու ուղղութիւնների էական կողմերը, որոնք իմ կարծիքով աւելի արժէքաւոր են և քննութեան արժանի, կցելով սրան նաև իմ հասկացողութիւնը։ Օգտուել եմ մեծ մասամբ հետևեալ աշխատութիւններից.

L. Gumplowicz Grundriss der Soziologie.
Г. Зиммель Соціальная дифференціація.
A. Loria Soziologie.
Н. Карѣевъ Введеніе въ изученіе соціологіи.
М. Ковалевскій Современные соціологи.

I

Ի՞նչ է հասարակութիւնը հարցը ըստ էութեան քննութեան է առնում և իւր ամբողջութեամբ հետազօտութեան նիւթ դարձնում սօցիոլոգիան։ Այս գիտութիւնը մարդկային գիտութիւնների համակարգութեան մէջ ամենավերջինն է ըստ ժամանակագրութեան և կարելի է ասել, դեռ ևս ոչ ամենուրեք և ոչ ամենքից ճանաչուած է իբր գիտութիւն։ Սօցիոլոգիան 19-րդ դարում ծնունդ առնելով ամենայն յամառութեամբ և տոկունութեամբ շարունակում է մինչև այժմս էլ իւր գոյու-

թեան իրաւունքները ճանաչեցնել տալ գիտական աշխարհում ընդհանրապէս։

Մարդկութիւնը իւր քաղաքակրթութեան, կուլտուրական զարգացման ընթացքում որքան աւելի է ընդարձակում իւր մտաւոր հորիզոնները թէ բնութեան և թէ մարդու վերաբերեալ կատարուած ուսումնասիրութիւնների աշխարհում, նոյնքան աւելի բարդանում են և բազմանում գիտութիւնները։ Մարդկութեան հետ աճում է նաև նրա գիտութիւնը։ Իւրաքանչիւր դար աշխատել է իւրովանն նոր հորիզոն բացանել մարդու առաջ և սրա հետ միասին առաջ բերել նոր հորիզոնը ուսումնասիրող մի նոր գիտութիւն։ 19-րդ դարը մարդկային գիտութիւնների շարքում տեղ տուեց մի նոր գիտութեան՝ սոցիոլոգիային, որի ծաղկումն ու առաջադիմութիւնը վերապահուել է մեր դարուն։

18-րդ դարի վերջին գիտական ուսումնասիրութիւնները միացած իրական կեանքի մէջ բռնկած մեծ յեղափոխութեանը, չկարողացան հասարակութեան ինչ շինելու հարցը ըստ արժանւոյն և ուղիղ վճռել և իրրև առկախ խնդիր ժառանգութիւն թողին 19-րդ դարին, որը, պէտք է խոստովանել, այս դէպքում պատուաւոր ժառանգ հանդիսացաւ։ 18-րդ դարում հասարակութիւնը ըստ էութեան քննութեան չէր առնուել, չնայելով, որ ժամանակի մեծ գլուխները և անձնազոհ մարդիկ, օր ու գիշեր աշխատում էին հասարակութեան բարեկեցութեան ու լաւ ապագայի, «ոսկէ դարի» հիմքը դնել։

Մարդկութեան բարօրութեան համար վաղուց ի վեր կռուախնձոր դարձած «ոսկէ դարը», որ մինչև քրիստոնէութիւնը համարւում էր արդէն եղած, կատարուած մի իրողութիւն և միայն քրիստոնէութիւնից յետոյ նորից ապագայում իրականութիւն ստանալու տենչի է վերափոխւում, 18-րդ դարը աշխատում էր ձեռք բերել այն, հիմք ունենալով անհատը և նրա ոյժերը։ Կարծում էին, որ անհատն է այն ոյժը, որը կարող է փակուած դրախտի բանալին գտնել և բաց անել երջանկութեան դուռը։ Անհատն էր հասարակութեան մէջ դերիշխող ոյժը այն ժամանակուայ կարծիքով, անհատը հասարակութիւնից աւելի ուժեղ էր համարւում. անհատի ստեղծագործող և ճանապարհ բացանող դերի մասին ոչ մի կասկած չէր կարող լինել։ Այս ուղղութեամբ կատարուած երկար արիւնհեղութիւնները և աւերածութիւնները թէ մտաւոր և թէ նիւթական աշխարհներում ցոյց տուին, որ ընտրուած ճանապարհը սխալ է, որ անհատի ոյժը չափից դուրս բարձր է գնահատուել և առաջ քաշուել և միւս կողմից հասարակութեան նշանակութիւնը ըստ էութեան չի հասկացուել, հասարակական ոյժը չի գնահատուել լրջօրէն։ Ահա հանդէս է գալի 19-րդ դարը այդ սխալը ուղղելու և իւր ուշը ու միտքը դարձնում է ամբողջապէս հասարակական ոյժի վրայ, քննութեան է առնում հէնց իրենց հասարակութեան իբրև մի պատմական և այժմ էլ գոյութիւն ունեցող տուեալ, այս քննութեան արդիւնքն է լինում գիտական նոր ճիւղի, սոցիոլոգիայի, հանդէս գալը յանձին Օգիւստ Կոնտի—Ֆրանսիայում։

Գիտական աշխարհը իւր ուշադրութիւնը դարձնում է նոր գիտութեան վրայ. աշխատաւորների թիւը շուտով բազմանում է. ուսումնասիրութիւնը առաջ է գնում հսկայական քայլերով։ Սակայն 19-րդ դարու կիսից յետոյ նոր գիտութեան շուրջը մի տեսակ շփոթութիւն է ծագում. մտքերը պղտորւում են և նոր գիտութեան հակառակորդների թիւը աճում է։ Արդէն բաւական յառաջադիմած քաղաքատնտեսութիւնը, նոր հիմքերով ամրապնդուած իրաւաբանութիւնը, ժամանակի իշխող բնական գիտութիւնը, փորձնական հոգեբանութիւնը, իւրաքանչիւրը իւր հերթին աշխատում է իւր վրայ առնել նոր գիտութեան առաքելութիւնը, աշխատում է ինքը լրացնել այն, ինչոր ուզում է նոր գիտութիւնը կատարել և այսպիսով նոր ծնուած մանուկ գիտութիւնը հէնց օրօրոցում խեղդել։ Այս գիտութիւններից իւրաքանչիւրը միայն իւր տեսակէտով է նայում խնդրին. հասարակութեան ինչ լինելը աշխատում է իւր յատուկ, միակողմանի միջոցներով լուծել, որ և չի յաջողւում և ոչ մէկին, քանի որ խնդիրը աւելի լայն և բազմակողմանի բովանդակութիւն ունի, քան այդ գիտութիւնների առաջարկած լուծումները առանձին առանձին վեր-

ցրած։ 19-րդ դարու 80-ական թուականներում կրկին մեծ թափով հանդէս են գալի նոր գիտութեան ջատագովներ և աշխատում են ուրոյն ճանապարհով և անկախ միջոցներով գիտութիւնների շարքում պատուաւոր տեղ տալ ու պաշտպանել սոցիոլոգիային։ Այս դէպքում առանձնապէս Իտալիան հանդէս է բերում մի շարք գիտնականներ, տալա Ֆրանսիան տալիս է ականաւոր գիտնականներ, Ռուսաստանը ևս իր հերթին յետ չի մնում մի քանի տաղանդաւոր գրողներ տալուց նոր գիտութեան ճանապարհը հարթելու համար։ Միայն Գերմանիան է, որ յամառօրէն մինչև վերջերս էլ պնդում է իւր հայեցակէտը, թէ սոցիոլոգիան առանձին գիտութիւն չէ, որ նա մտնում է այս կամ այն գիտութեան մէջ։ Գերմանական համալսարաններում մինչև օրս էլ (ինչպէս նաև Ռուսաստանում մինչև վերջերս) չկան առանձին ուսուցչապետներ, որոնք սոցիոլոգիան դարձնէին յատուկ դասախօսութեան նիւթ (բացառութեամբ Բերլինի համալսարանի ուսուցչապետ Զիմմէլի, որը երբեմն կարդում է սոցիոլոգիայի մասին, բայց զանազան անունների տակ)։ Որքան և յամառէր նոր գիտութեան դէմ մղուած կռիւը և տեսական, այնուամենայնիւ նա կարողացաւ յաղթանակը տանել։

Առաջները հասարակութեան ինչ լինելը ուսումնասիրելու, քննելու դէպքում հասարակութիւնը մասերի էին բաժանում և առանձին մասերը ուսումնասիրում, կարծելով որ այդ մասերի ուսումնասիրութիւնը բաւական է խնդրի ամբողջական պարզաբանութեան համար։ Նատերը հասարակութեան մէջ տեսնում էին իրրև էական ոյժ և գլխաւոր տարր իրաւունքը և որովհետև իրաւունքը արդէն մի առանձին գիտութեան՝ իրաւաբանութեան նիւթն է կազմում, առարկում էին, որ սոցիոլոգիան այս տեսակէտից աւելորդ է։ Նոյնը անում էին նաև տնտեսագէտները, տնտեսութիւնը համարելով գեկավարող ոյժ հասարակութեան մէջ և քաղաքատնտեսութեանն էին վերապահում հասարակութեան ինչ լինելու ուսումնասիրութիւնը։ Նման ընթացք էին բռնել մասամբ և բնագէտները. հասարակութիւնը նմանեցնելով օրգանիզմի և նրա զարգացման, յառաջադիմութեան ընթացքը օրգանիզմի զարգացման օրէնքներով բացատրելով։

Այս բոլոր առարկութիւններում աչքի է ընկնում մի հիմնական թերութիւն, այդ այն է, որ վերոյիշեալ գիտութիւնները հասարակութիւնը ոչ թէ իւր ամբողջութեամբ են քննութեան առնում, այլ տարրալուծում են, ընտրում մի տարրը և այդ էլ համարում և էական և ամբողջը փոխարինող տարրը։ Միթէ պարզ չէ սակայն, որ ամբողջի տեղ մասը ընտրել՝ արդէն իսկ խնդրի քննութեան ամբողջութեան համար վտանգաւոր է. հնարաւոր է, որ մասը ամբողջի դերը խաղայ և պարզ ու լրիւ արտայայտէ այն, ինչոր ամբողջը ունի իւր մէջ։ Թէ իրաւունքը, թէ տնտեսութիւնը, թէ մարդու օրգանական զարգացումը հասարակութեան մէջ միայն բաղադրիչ երևոյթներ են, միայն մասեր են ամբողջ տուեալի. այդ բոլորը պէտք է քննութեան առնուին միասին վերցրած, կապակցուած միմեանց հետ, իրար հետ յարաբերութեան մէջ մտած դէպքում և ոչ առանձին առանձին։ Ինչպէս մի տուն այլ բան է, այլ հասկացողութիւն, այլ տուեալ, քան այդ տան բաղադրիչ մասերը (քար, փայտ, աւազ, կիր, կարասիներ և այլն), նոյնպէս հասարակութիւնը այլ երևոյթ, հասկացողութիւն է, քան նրա բաղադրիչ մասերը առանձին առանձին վերցրած։ Սոցիոլոգիան կոչուած է քննելու ամբողջը իւր էութեամբ, ամբողջութիւն կազմող մասերի յարաբերութիւնները, ընդհարումները, կապակցութիւնները, որոնք միացած մասեր են տալիս և ամբողջ պատկերը։

Բացի այս մի գիտութիւն ոչ միայն իւր նիւթով է մի այլ գիտութիւնից տարբերուում, այլ և իւր ուսումնասիրութեան մեթոդով. նոյն նիւթը կարելի է ուսումնասիրել զանազան մեթոդներով, զանազան տեսակէտներով, այդ դեռ չի նշանակումի հարկէ, որ նիւթի նոյնութեան պատճառով այդ գիտութիւններից մէկի գոյութիւնը պէտք է ժխտել։ Մի բոպէ նոյն իսկ ենթադրենք, որ սոցիոլոգիան նոյնն է ուսումնասիրում, ինչ որ միւս գիտութիւնները, այդ դեռ մեզ իրաւունք չի տալի նրա գոյութիւնը իրրև առանձին գիտութիւն ժխտել, քանի որ նա այլ տեսակէտով է մօտենում հարցին։

Մինչդեռ մարդկային գիտութիւնների աղքատիկ շրջանում մի նոր գիտութեան հանդէս գալը աւելի շուտ կապուած էր նիւթի նորութեան ու առանձնակի բնաւորութեան հետ, այժմ, երբ գիտութիւնները բարդացել են, երբ ուսումնասիրութիւնների որակն ու քանակը խիստ աճել է, հնարաւոր է դարձել մի նոր գիտութեան երևան գալը հէնց իրենց այդ գիտութիւնների միջից: Սկզբում մարդը իւր առաջ ունէր մի մեծ աշխարհ չմշակուած նիւթերի, չհետազօտուած երևոյթների և դրա համար ստեղծում էր նոր նոր գիտութիւններ համապատասխան երևոյթին և նիւթին: Այժմ գիտութիւնները իրենք այնքան են բարդուել, որ կարիք է զգացուում քննութեան ենթարկելու հէնց իրենց գիտութիւններին, որոշելու նրանց արժէքը ընդհանրապէս մարդկային յառաջադիմութեան տեսակէտից և այս ոչ պակաս կարևոր խնդիրը իր քննութեան նիւթ է դարձնում մի նոր գիտութիւն, օրինակ սոցիոլոգիան: Հոգեկան գիտութիւնների (geisteswissenschaften) խիստ կարուած լինելը իրարից կարծես բաժինքեան մի դրդիչ է դառնում մի նոր, այդ բոլոր գիտութիւնները միմեանց հետ կապող, գիտութեան առաջ գալուն:

Մինչդեռ ուրիշ գիտութիւններ ըստ մեծի մասին աշխատում են նախ ուսումնասիրուելիք նիւթը մշակել, պարզել, ապա անցնել ուսումնասիրութեան մեթոդի խնդրին, նոր գիտութեան համար կարևոր է եղած նիւթի մշակութեան ձևի, եղանակի մասին հոգ տանելը, նոր մեթոդի մշակութիւնը: Մարդկային հասարակութեան զանազան կողմերը ուսումնասիրող գիտութիւնները տալիս են միայն զատ զատ տեղեկութիւններ, որոնց սոցիոլոգիան միացնելով աշխատում է նոր մեթոդով ուսումնասիրել: Սոցիոլոգիան ոչ միայն միւս գիտութիւնների տուած նիւթերից է օգտուում, այլ և նրանց մեթոդներից, աշխատելով գործածել սրանցից իւրաքանչիւրի իւր համապատասխան դէպքում ամբողջութիւնը հասկանալու համար: Մարդկային հասարակութեան վերաբերեալ գիտութիւնները շաղկապողը և մի ընդհանուր նպատակի ծառայեցնողը այսպիսով սոցիոլոգիան է:

«Ժամանակակից կենսաբանութեան վրայ իրաւունք ունենք նայելու իբրև երկրի վրայ եղած օրգանական կեանքի զանազան կողմերը ուսումնասիրող բոլոր առանձին առանձին գիտութիւնների փիլիսոփայութեան վրայ. ճիշտ նոյն տեսակ ընդհանրացնող և միացնող փիլիսոփայական նշանակութիւն ունի նաև սոցիոլոգիան» *):

Ասացի, որ նոր գիտութիւնը իր գոյութեան իրաւունքը ձեռք բերելու համար կատարել է տնտղին ոլորապտոյտ ճանապարհ և անցել է զանազան շրջաններ: Խնդիրը լաւ հասկանալու համար կարևոր է աչքի անցկացնել այն դլխաւոր ուղղութիւնները, որոնք մինչև այժմ գոյութիւն են ունեցել և այսպիսով պատմականօրէն պարզաբանել նրա ներկայ վիճակը: Նրա մօտ 60 տարուայ գոյութեան ընթացքում հանդէս են եկել ոչ միայն զատ զատ անհատական մտածողներ, այլ և կազմուել են որոշ ուղղութիւններ, որոնք ունեցել են երբեմն դերակշռող դիրք և բաւական հետևողներ: Այս իսկ հանգամանքը, տեսական պայքարը, ուղղութիւնների կազմուելը ապացոյց է, որ խնդիրը զուր տեղը բարձրացրած մեծ աղմուկ չէ, որ այդ հարցը այժմէական է և կարևոր: Որքան մի ոյժ հզօր է, նոյնքան մեծ է լինում նրան դիմադրելը: Դիմադրողների քանակից և ցոյց տուած եռանդից կարող ենք մակաբերել, թէ որքան մեծ է հակառակ ոյժը: Սոցիոլոգիայի կարևորութիւնը և ոյժը կարելի է այսպիսով հէնց նոյնիսկ նրա հակառակորդների թուից ու ոյժից հասկանալ:

II

Օգիւստ Կոնտ եւ մտաւորական ուղղութիւն.

Սոցիոլոգիայի հայր Օգիւստ Կոնտը, որը 1830 թ. լոյս ընծայեց իւր «Դրական փիլիսոփայութեան կուրսը» աշխատութիւնը, հիմք դրեց նոր գիտութեան և ուղղութիւն տուեց սոցիոլոգիային: Մինչև Կոնտը 18-րդ դարու փիլիսոփաները հասարակութիւնը համարում էին մարդկային մտքի գիտակ-

*) Карѣевъ Введеніе въ изуч. соц. 3.

ցական, գիտաւորեալ մի ստեղծագործութիւն։ Հասարակութիւնը, ըստ Ռուսսոյի, համաձայնութեան եկած անհատների մի խմբակցութիւն էր. մարդիկ հասկանալով հասարակական կեանքի կարևոր ու օգտակար նշանակութիւնը, փոխադարձ համաձայնութեան դալով հաստատել էին հասարակական կեանքը։ Կոնտը իւր ուսումնասիրութեան մէջ նախ բողոքում է այդ թիւր հասկացողութեան դէմ, գտնելով, որ հասարակութիւնը ոչ թէ արհեստական մի երևոյթ է, այլ բնական, նոյնքան, որքան օրգանիզմը ինքը բնական է։ Մարդիկ ոչ թէ զատ զատ կենցաղի վնասները հասկանալուց յետոյ համաձայնութիւն են կայացրել միատեղ կեցութեան, այլ այս դրութիւնը բնութեան արդիւնք է, անկախ մարդկային կամքից և ցանկութիւնից առաջ եկած։ Այս հայեացքը մի բողոք էր ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ պաշտպանուող դաղափարի. այս պատմական մեծ երևոյթը ինքը ցոյց տուեց, որ հասարակութիւնը արհեստական մի երևոյթ չէ և ուրեմն ըստ ցանկութեան էլ չի կարելի փոփոխութիւնների ենթարկել։ Իբրև բնութեան արդիւնք, իբրև մի տուեալ դրութիւն, որի առաջ դալու մէջ մարդը ինքը անմիջական դեր չունի, Կոնտը հասարակութիւնը, կամ ինչպէս ինքն է ասում «հասարակական ֆիզիկան» ուսումնասիրելու համար առաջարկում է իւր մշակած դրական փիլիսոփայութեան մեթոդը։ «Դրական փիլիսոփայութեան հիմնական բնոյթն է քննել բոլոր երևոյթները, իբրև այնպիսիներ, որոնք ենթարկուած են բնական անփոփոխ օրէնքների. վերջիններիս ճշդրիտ որոշելը և որքան կարելի է դրանց թիւը խտացնելը, մեր բոլոր ջանքերի նպատակն է. ի նկատի ունենալով ընդմիշտ, որ այսպէս ասած սկզբնական և վերջնական պատճառները մարդկային մտքին բոլորովին անմատչելի են *)։

Կոնտը սոցիոլոգիան համարում է մի տեսական գիտութիւն, մի գիտութիւն, որը աշխատում որոնել ընդհանուր օրէնքներ։ Կոնտը տեսական գիտութիւնները փորձնական գիտութիւններից բարձր է գնահատում։

*) Карѣевъ Введ. 13 եր.

Կոնտը սոցիոլոգիան բաժանում է երկու մասի՝ շատատիկ և դիւնամիկ (կայուն և շարժուն դրութիւններ)։ Շատատիկ մասում ուսումնասիրում է հասարակութեան մէջ եղած կարգը, այն կազմակերպութիւնը, որով հասարակութիւնը կառավարւում է, որով հասարակութեան անդամները կապւում են ի մի ամբողջութիւն։ Շատատիկը ուսումնասիրում է հասարակութեան հաւասարակշռութեան պայմանները և դեկավարող ոյժերը. իսկ դիւնամիկը դրաղւում է հասարակութեան զարդացման, յառաջադիմութեան օրէնքներով։ Կոնտը որոնեաւ իւր տուած գիտութիւնների համակարգութեան մէջ տեղ չէր տուել հոգեբանութեանը, համարելով վերջինիս ֆիզիոլոգիայի մի մասը, ուստի նրա տուած հասարակական կարգի ուսումնասիրութեան մէջ հոգեկան միութիւնը, հոգեկան կապակցութիւնը ի նկատի չի առնուած. նա հասարակութեան հաւասարակշռութիւնը բացատրում է իբրև բնութիւնից դրուած մի դրութիւն այնպէս, ինչպէս օրգանիզմի դրութիւնն է։ Սակայն նա մոռանում է, որ առնուազն ժամանակակից հասարակութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալի, որ որքան մարդկային հասարակութիւնը յառաջադիմում է, այնքան ֆիզիքական արտաքին կապերի տեղ հոգեկան կապերն են դեր խաղում։ Կարևորն այն է միայն, որ Կոնտը պահանջում է հասարակական կարգը, հաւասարակշռութիւնը ուսումնասիրելու դէպքում ուշք դարձնել ամբողջութեան վրայ։ Կոնտն է, որ առաջին անդամ շեշտում է, թէ հասարակութիւնը ըստ էութեան ուսումնասիրելու դէպքում պէտք է խոյս տալ տարրալուծելու, մասերի բաժանելու մեթոդից և ամբողջութիւնը պէտք է առաջ քաշել և ամբողջը անբաժան կերպով ուսումնասիրել։

Հասարակութիւնը ուսումնասիրող գիտութեան դիւնամիկի էական կողմը Կոնտը համարում է մարդկութեան յառաջադիմութիւնը կամ, աւելի ճիշտ ասած, զարդացումը. Կոնտը ընդունում է, որ առհասարակ մարդկային հասարակութիւնը միատեսակ է զարդանում և որ մտաւոր զարդացումը մարդկային առաջադիմութեան դերակշռող սկզբունքն է։ Քանի որ մարտու մտաւորն է դեկավարում հասարակութեան ընթացքը,

քանի որ միտքն է առաջ մղող և ուղղութիւն տուող ոյժը հասարակական յառաջադիմութեան խնդրում, ուստի հասարակութեան արտաքին կեանքն էլ պէտք է իւր հերթին համապատասխանէ այդ մտաւոր զարգացմանը: Մարդկային մտաւոր զարգացման մէջ Կոնտը տեսնում է երեք շրջան. աստուածաբանական, մետաֆիզիկ և դրական-գիտական: Սրան համապատասխանում են հասարակութեան արտաքին կեանքի զարգացման երեք շրջաններ — սկզբում զինուորական շրջան, ապա օրէնսդրական, որին հետևում է ինդուստրիական շրջան:

Որքան և Կոնտը դրական փիլիսոփայութեան հետևող էր, որքան և պահանջում էր ուսումնասիրել երևոյթները և այստեղից հանել ընդհանուր օրէնքներ, սակայն վերջին դէպքում նա շեղւում է իւր տուած օրէնքից: Կոնտի տուած հասարակութեան զարգացման երեք մեծ շրջաններում ոչ թէ նրա երևոյթների, եղած պատմութեան ուսումնասիրութեան արդիւնք են, այլ իւր մտածած, իւր նախօրօք կազմած ծրագիրն է, որի համաձայն նա ուզում է հասարակութեան մինչև ինքը ունեցած զարգացումը բացատրել, ուրիշ խօսքով՝ նա ունի իւր արամաբանական մտածողութեան տեսական օրէնքները և աշխատում է հասարակութեան սկզբից մինչև ինքը կատարած զանազան ձևափոխութիւնները որև է կերպ յարմարացնել իւր ստեղծած օրէնքներին:

Կոնտը հասարակութիւնը համարում է միակ տուեալ, որի հետ սոցիոլոգիան գործ պիտի ունենայ. անհատի գոյութիւնը գիտական ուսումնասիրութեան տեսակէտից նա ժխտում է: Հասարակութեան զարգացման մէջ միայն հասարակական մտաւոր ոյժն է դերխաղացողը և ոչ անհատական ոյժը: «Հանճարեղ մարդիկ, ասում է նա, որոնց մեծ մասամբ վերագրում էին կատարուած յաջողութիւնները, կարծես միայն նախորոշուած շարժման իսկական գործիքներ էին»:*) Այսպիսով նա մի կողմից կուում էր 18-րդ դարու հայեացքների դէմ, երբ անհատական ոյժը չափազանց էր գնահատւում, միւս կողմից

*) Карѣевъ—Введ. в. из. соц. 23-եր.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
ԱՄԱՍԻԵՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ
имени Абовяна

սակայն ընկնում էր մի սխալի մէջ, [illegible] տալով հասարակութեան զարգացման խնդրում:

Կոնտի այս տեսութեան ամենաթոյլ կողմն այն է, որ նա լռելեայն ընդունում է գոյութեան և մտածողութեան համապատասխան լինելը: Նրա կարծիքով միտքը և գոյութիւնը հաւասարազօր գաղափարներ են և իրար ծածկում են. միտքը իւր ամբողջ բովանդակութեամբ համապատասխանում է գոյութեանը. այն, ինչ որ միտքը արտադրում է և ունի իւր մէջ, ըստ Կոնտի գոյութեան համապատասխան է: Այս տեսութեան սխալը հէնց այն է, որ միտքը գոյից նիւթ առնելով, կարողանում է իւր ծնողից աւելի բան ծնել իւր իսկ միջից: Միտքը իւր հերթին ուսումնասիրում է գոյութիւնը, այն ինչ որ կայ, բայց ոչ անխուսափելիօրէն այն ամէնը, ինչ որ գոյութիւն ունի միայն, այլ աւելի երևոյթներ: Մտքի մէնք շատ երևոյթներ, գաղափարներ ունենք, որոնք ըստ ինքեան ոչ գոյին են համապատասխանում և ոչ էլ գոյութիւն ունին: Բաւական է յիշել մեր երևակայութիւնը և նրա արդիւնքները, մեր ցնորքները, մեր իդէալները մի կողմից և գոյութեան իսկապէս ինչ լինելու և ինչպէս լինելու, հասկանալու անհնարինութիւնը միւս կողմից, տեսնելու համար՝ թէ ինչ վիհ կայ երկու տարբեր երևոյթների մէջ: Այս տեսակէտից որքան արժէքաւոր է Կոնտի սոցիոլոգիայի ստատիկը, թէև քիչ մշակուած, նոյնքան թոյլ և միակողմանի է նրա սոցիոլոգիայի դինամիկը: Աւելացնենք նաև այն, որ Կոնտը մարդկային հասարակութեան զարգացման դեկը տալիս է մտքին և ոչ թէ ընդհանրապէս հոգուն: Միտքը մարդկային հոգեկան աշխարհի միայն մի արտայայտութիւնն է և մի կողմի դեկավարը, մինչդեռ հոգին աւելի խորը և բազմակողմանի է և ունի այլ և այլ արտայայտութիւններ. օրինակ կամքը, զգացմունքները, որոնց թէ գոյութիւնը և թէ կատարած դերը մարդու կեանքում ժխտել չի կարելի:

Մանրամասն քննութեան առնել Կոնտի մարդկային հասարակութեան զարգացման երեք շրջանները այստեղ աւելորդ է. բաւական է յիշել ընդհանուր պատմութիւնից մի քանի դէպքեր ցոյց տալու համար, որ Կոնտի տուած բացատրու-

1003
12392

թիւնը սխալ է։ Օրինակ միջին դարում իշխում էր մետաֆիզիկ աստուածաբանական ուղղութիւնը մարդկանց մտքերում. բայց հասարակական կեանքում չկար զինուորական ամուր կազմակերպութիւն. կամ հէնց նոր դարում, երբ իշխում է դրական փիլիսոփայութիւնը, մենք չենք տեսնում ամենուրեք հասարակական կազմում ինդուստրիական կազմակերպութիւն։

Կոնտը ունեցել է բաւականաչափ հետևողներ, որոնք ոչ բստ ամենայնի հետևել են իրենց ուսուցչին, այլ օգտուելով նրա տուած հասարակութեան ինչ լինելու բացատրութիւնից, աշխատել են իրենց հերթին վերլուծել հասարակութեան մէջ գործող ոյժերը, ընտրել դրանցից մէկը և այդ գործօնով բացատրել հասարակութեան զարգացումը։ Այդպիսիներից են Ադոլֆ Կվէտլէյը, Բօկլը, Մաքս Միլլէր և այլն. սրանք բոլորն էլ մարդկային հասարակութեան զարգացման մէջ տեսնում են իբրև մշտափոփոխ և յառաջադիմող տարր միտքը և մարդկային գիտութիւնը, իսկ մարդու հոգեկան միւս արտայայտութիւնները նկատում են իբրև աւելի կայուն տարրեր. այդ պատճառով մարդկային քաղաքակրթութեան զարգացման էական դրդիչ գործօնը համարում են գիտութիւնը, միտքը (Բօկլ. Անգլիայի քաղաքակրթութեան պատմութիւնը)։

III

Օրգանական ուղղութիւն

Բնական գիտութիւնը անցեալ դարու սկզբներում նոր թափով զարթելով ողողեց ամբողջ գիտական աշխարհը. շնորհիւ հանճարեղ հետազօտողների նա մեծ տիրապետութիւններ արաւ և իւր վրայ հրաւիրեց գիտական աշխարհի ուշադրութիւնը։ Նրա ազդեցութիւնն ու հմայքը շատ մեծ էր, մինչ այն աստիճան, որ գիտութեան լուրջ ծառայողներն անդամ մի տեսակ տարուեցին նրանով։ Բնական գիտութիւնը ոչ միայն բնութեան ուսումնասիրութեան համար այսպիսով նոր գիտական ճիւղեր առաջ բերեց և նպաստեց եղածներին աւելի ընդլայնելու և խորանալու, այլ և իւր ազդեցութիւնը տա-

ծեց միւս գիտակարգերի վրայ՝ փիլիսոփայութեան, պատմութեան, ի միջի այլոց նաև սոցիոլոգիայի վրայ։ Դուրս եկան մի շարք հեղինակներ, որոնք ոգևորուած բնագիտութեան նոր նուաճումներով աշխատեցին հասարակութեան էութիւնը և զարգացումը բնագիտութեան օրէնքներով բացատրել։ Դարվինի տուած տեսակների ծագման տեսութիւնը մի կողմից նրանց այն հիմքն էր տալի, որ մարդ արարածը կենդանական աշխարհի զարգացման վերջին տեսակն է, որ մարդը շարունակութիւն է կենդանական աշխարհի, հետևապէս մարդկային հասարակութեան ուսումնասիրութեան դէպքում պէտք է ի նկատի ունենալ օրգանական աշխարհի զարգացման օրէնքները։ Միւս կողմից Կոնտն արդէն այն միտքն էր տարածել, որ հասարակութիւնը մի պատահական ու արուեստական երևոյթ չէ, այլ բնական օրէնքներով է կազմուած. հետևապէս եթէ հասարակութիւնը բնական օրէնքների է ենթակայ, պէտք է օգտուիլ այն գիտութեան տեսութիւններից, որը անմիջապէս իւր քննութեան նիւթը դարձնում է բնութիւնը։

Գիտութեան մէջ առհասարակ յայտնի դրութիւնից են անցնում անյայտ դրութեան ուսումնասիրութեանը, միայն որոշ, յայտնի, պարզաբանուած գիտական օրէնքները հնարաւոր են դարձնում անյայտի ուսումնասիրութիւնը։ Բնագիտութիւնը ընդհանրապէս տուել էր մի շարք օրէնքներ օրգանիզմի զարգացման և նրա էութեան վերաբերեալ. մարդկային հասարակութիւնն էլ մի տեսակ շարունակութիւն լինելով օրգանական աշխարհի զարգացման, պէտք է նոյն օրէնքներին ենթարկուէր, յայտնի դրութիւնից պէտք էր անյայտ դրութեան ուսումնասիրութեանը անցնէր։ Ահա այս բանավարութեան հետևանք է լինում սոցիոլոգիայի մէջ օրգանական ուղղութեան առաջ գալը և երկար ժամանակ ահագին չափեր ստանալը։

Այս ուղղութեան էական հիմքը այն է, որ հասարակութիւնը ինքը մի օրգանիզմ է, որը իւր զարգացման ընթացքում ենթարկուում է նոյն օրէնքներին, ինչ որ օրգանիզմը։ Այս ուղղութեան հետևողներից շատերը հասարակութիւնը ոչ միայն համեմատում են օրգանիզմի հետ, այլ և շատ անդամ

նաև նոյնացնում, այսինքն աշխատում էին այն ամենը, ինչոր ունի առհասարակ օրգանիզմը, դտնել նաև հասարակութեան մէջ. ծայրահեղութիւն, որը արդիւնք է եղել բնագիտական նոր օրէնքների թերի ու միակողմանի ըմբռնողութեան։ Օրգանական ուղղութիւնը ընդունում է, որ հասարակութիւնը իւր կազմութեամբ մի օրգանիզմ է, որ հասարակութեան կազմող մասերը նոյն դրութեան մէջն են, ինչ որ օրգանիզմի բաղադրիչ մասերը։ Ինչպէս օրգանիզմը մի ամբողջութիւն է, կազմուած զանազան մասերից, որոնք միմեանց հետ սերտ կապակցութիւն ունեն, միմեանց լրացնում և պայմանաւորում են, նոյնպէս և հասարակութիւնը մի ամբողջութիւն է կազմուած զանազան մասերից, որոնք միացած են անբաժան իրար հետ, միմեանց պայմանաւորում և լրացնում են։ Օրգանիզմը ունի զարգացում, նոյնպէս և հասարակութիւնը. օրգանիզմի զարգացման էական յատկանիշն է ամբողջի միութիւն և մասերի շերտաւորումն. որքան օրգանիզմը զարգացման բարձր աստիճանի վրայ է դտնւում, նոյնքան աւելի նրա բաղադրիչ մասերը կլանւում են ամբողջի կողմից և նոյնքան աւելի տարբերութիւն է առաջ գալի հէնց իրենց այդ մասերի մէջ։ Այս նոյն զարգացման օրէնքն է իշխում նաև հասարակութեան մէջ. որքան մարդկութիւնը յառաջադիմում է, նոյնքան աւելի նրա ամբողջութիւնը ընդլայնւում է, այսինքն կազմող մասերն աւելի սերտ են կապւում ամբողջութեան հետ և նոյնքան աւելի տարբերութիւններ է առաջ գալի նրա բաղադրիչ մասերի մէջ։

Մի կողմից, օրինակ, տեսնում ենք, որ մարդկութեան գաղափարը, որ առաջ նեղ, սահմանափակ էր ու համարեա անհասկանալի, այժմ աւելի քան ընդարձակուել է. նրա մէջ առաջ մտնում էին միայն մի քանի ազգեր. (յոյները նոյնիսկ միայն իրենց էին իսկական մարդկութեան ներկայացուցիչ համարում, իսկ օտարներին բարբարոս), այժմ բոլոր ազգերը պարփակւում են մարդկութիւն գաղափարի մէջ։ Միւս կողմից այդ կազմող մասերի տարբերութիւնը առաջ մեծ չէր. ազգերն իրենց գործունէութեան ֆունկցիաներով շատ չէին տարբերւում. առաջ ազգերը մեծ մասամբ և հողագործ և անասնապահ և արդիւնաբերող էին միաժամանակ, իսկ այժմ ազգերից ոմանք առաւելապէս հողագործութեամբ են զբաղւում, միւսները արդիւնաբերութեամբ (ինդուստրիա), ուրիշները մշնորդների դեր են կատարում։ Այս օրինակից երևում է, որ մի կողմից ամբողջն է մեծանում և բաղադրիչ մասերն են աւելանում, միւս կողմից այդ մասերն աւելի ու աւելի են տարբերւում միմեանցից։ Ինչպէս օրգանական աշխարհում նպատակը ըստ ինքեան դեր չունի, այլ ամեն ինչ մեքենայօրէն է կատարւում, նոյնը նաև հասարակութեան զարգացման մէջ, ոչ թէ առաջուց նշանակուած նպատակը, իւր հողն է դեր խաղացողը, այլ հասարակութեան մէջ գործող մեքենայական ոյժերն են ամեն ինչ առաջ տանում։ Այդպիսով օրգանական ուղղութիւնը հասարակութեան զարգացումն ու կազմութիւնը ըստամենայնի համեմատում է և գտնում է նոյն օրգանիզմի զարգացման ու կազմութեան հետ։

Ուշադրութեամբ նայելով խնդրին՝ կտեսնենք, որ այս ուղղութիւնը ևս իւր հերթին նիւթի ուսումնասիրութեան համար թիւր ճանապարհ է ընտրում։ Հասարակութիւնը և օրգանիզմը իրար նմանեցնել չի կարելի այն պատճառով, որ մինչդեռ օրգանիզմի բաղադրիչ մասերից ամեն մէկը ամբողջութեան համար անհրաժեշտ է և նրա բացակայութեան դէպքում օրգանիզմի ամբողջութիւնը կ՚կորչի, նոյնը չի կարելի ասել նաև հասարակութեան վերաբերմամբ. սրա կազմող մասերից մէկը կամ միւսը կարող է պակասել և դեռ ամբողջութիւնը չի խանգարուի։ Օրինակ, եթէ օրգանիզմի որև է անդամը՝ ձեռքը, ոտքը, աչքը, պակասի, ամբողջութիւնը կխանգարուի. այդ նոյնը չի կարելի ասել հասարակութեան վերաբերմամբ. հասարակութեան մի անդամ կարող է մեռնել, հեռանալ ամբողջից, բայց դրանով դեռ ևս ամբողջութիւնը չի խանգարուի։ Միւս կողմից հասարակութիւնը կարող է մեծանալ իւր մասերի թէ որակով և թէ մանաւանդ քանակով, մինչդեռ օրգանիզմի բաղադրիչ մասերի համար չի կարելի ասել, թէ նրանք քանակով կարող են շատանալ։ Մի հասարակութեան անդամների թիւը ժամանակի ընթացքում աճում է, եռապատկւում և քառապատկւում է, մինչ-

դեռ օրգանիզմի անդամները ոչ միայն չեն աճում քանակով, այլ աւելի շուտ պակասում են։

Օրգանիզմի մէջ գիտակցութիւնը կեդրոնացած է մի տեղ. ուղեղն է այն կեդրոնը, որը ղեկավար է հանդիսանում օրգանիզմի համար։ Մի՞թէ կարելի է նոյն բանը ասել նաև հասարակութեան վերաբերմամբ. ո՞վ կարող է ասել, թէ որտեղ է հասարակութեան ընդհանուր ղեկավարող և հսկող ոյժը. կամ հնարաւո՞ր է գործածել նոյն իսկ «հասարակութեան ուղեղ» դարձուածքը։ Դարձեալ մի խոշոր տարբերութիւն օրգանիզմի և հասարակութեան կազմութիւնների մէջ։

Ինչպէս տեսնում ենք, հասարակութիւնը իւր կազմութեամբ արդէն իսկ նման չէ օրգանիզմին և հեռաւապէս սխալ է նմանութիւն գտնել երկուսի զարգացման օրէնքների մէջ։ Օրգանիզմի զարգացման ընթացքում գլխաւոր ոյժը կեդրոնանում է ամբողջութեան վրայ. մասերը մի տեսակ ծառայական դրութեան մէջ են ամբողջի վերաբերմամբ. նրանք գործիքներ են, որ ամբողջը զարգանայ։ Հասարակութեան զարգացման մէջ մենք բոլորովին հակառակ երևոյթն ենք նկատում. ամբողջն է ծառայում իւր մասերին. մարդ անհատը միջոց չէ և ոչ՝ գործիք հասարակութեան համար. նա չի ծառայում հասարակութեան ձեռքին իբրև գործիք, այլ ընդհակառակը հասարակութիւնը, ամբողջութիւնն է աշխատում իւր մասերի բարօրութեան համար, եթէ կարելի է ասել, այս դէպքում նպատակը մասն է, իսկ միջոցը՝ ամբողջը։ Օրգանիզմի զարգացման ընթացքում որքան և շերտաւորումն ու համախմբումն առաջ է գնում (дифференціація и интеграція), այնուամենայնիւ ամբողջը ու մասերի յարաբերութիւնը, կապը միշտ ֆիզիոլոգիական է, մինչդեռ հասարակութեան զարգացման ընթացքում նկատում ենք, որ ամբողջի ու մասերի մէջ եղած ֆիզիոլոգիական կապերը հետզհետէ տեղի են տալիս հոգեկաններին։ Անհատը հասարակութեան հետ առաջ կապուած էր աւելի շուտ ֆիզիոլոգիապէս. այժմ ընդհակառակը, հոգեկան կապերն են դեր խաղացողները անհատի հասարակութեան մասը կազմելու խնդրում. անհատը աւելի շուտ ազատ է այս դէպքում, քան անհրաժեշտութեան տակ է։

Ըստ Դարվինեան տեսութեան, օրգանիզմների զարգացման մէջ իշխողը կեանքի կռիւն է. աւելի լաւ յարմարուողը, աւելի ուժեղն է կեանքում ապրում և յաղթանակ տանում. հասարակութեան մէջ իշխողը միշտ կեանքի կռիւը չէ, այլ նաև ընկերսիրական զգացմունքը, անձնազոհութիւնը։ Մարդկային հասարակութեան մէջ միշտ աւելի յարմարուողը չի ապրում, այլ նաև տկարը, թոյլը. օրինակ սարուկները, հորտերը, այժմ մասամբ բանուորները պահպանում են իրենց գոյութիւնը, թէև սրանք կեանքի կռիւի մէջ համեմատաբար թոյլ են։ Որքան օրգանիզմը զարգանում է, այնքան աւելի է ուժեղանում նրա մղած կռիւը միւս օրգանիզմների դէմ. եթէ հասարակութիւնն էլ յիրաւի միայն օրգանիզմի զարգացման օրէնքին ենթարկուէր, պէտք է որ անհատական կռիւը աւելի խստանար և հասարակական շահը, ոչ անմիջական անհատական շահը դեր խաղար կեանքում։ Ով պատմութեանը ծանօթ է, չի կարող բողոքել այսպիսի կոպիտ սխալի դէմ։ Միայն կեանքի կռուով առաջնորդուող, աւելի լաւ յարմարուելու ձգտող հասարակութեան անդամներից երբէք անհատական անձնազոհութեան օրինակներ չէինք կարող սպասել. հերոսների գոյութիւնը պէտք է ժխտէինք. պատմութեան էջերից պիտի ջնջէինք Յովհան Հուսի, Սավօնարոլայի, Վարդան Մամիկոնեանի անունները։

Օրգանիզմի զարգացման մէջ իշխող օրէնքն է, որքան կարելի է աւելի լաւ յարմարուել շրջապատին, աւելի լաւ միջոցներ ձեռք առնել շրջապատի հետ դաշնակցելու։ Մարդկային հասարակութեան զարգացման մէջ մենք տեսնում ենք նաև մի այլ երևոյթ. ոչ միայն յարմարուել շրջապատին, այլ նաև աշխատել շրջապատը իրեն յարմարեցնել։ Այս երևոյթը զարգացման մէջ մի նոր գործօն ոյժ է. բնութիւնը իրեն յարմարեցնել կնշանակէ ստորադրեալի դերից իշխողի դերի անցնել, մի դրութիւն, որ օրգանիզմին անծանօթ է։ Օրգանիզմը միշտ ստորադրուած է շրջապատին և բնութեան օրէնքներին, նրա աշխատանքը միտեսակ կրաւորական է. մինչդեռ հասարակութեան զարգացման մէջ մենք սրա կողքին տեսնում ենք նաև մի ներգործական կողմ. մարդկային հասարակութիւնը վերջին դէպ-

քում մի տեսակ կեանքի կռուի մէջ պաշտպանողական դրութիւնից անցնում է երբեմն յարձակողական դրութեան։ Որքան և մարդը ստիպուած է ցրտին տաք հագնուել, շոգին՝ թեթև, նոյնքան էլ նա անանցանելի ճանապարհները կարողանում է հարթել և իրեն յարմարեցնել. հեռաւորութիւնը արգելք չի լինում նրա համար խօսելու (տելեֆօն, հեռագիր). գիշերային մթութիւնը նա կարողանում է էլէկտրական լոյսով լուսաւորել և այլն և այլն։

Օրգանիզմը իւր մղած կեանքի կռուում օգտւում է բացառապէս բնութեան տուած զէնքերով, մինչդեռ այժմ մենք լաւ ենք տեսնում թէ ինչպէս հասարակութիւնը իւր մղած կռիւներում ճրպիսի արհեստական զործիքներ է ստեղծել, միջոցներ, որոնք բնութիւնից չեն տուած, այլ միայն մարդկային մտքի ծնունդ են։ (Բաւական է յիշել վերջին նշանաւոր պատերազմները, գաղափար կազմելու հասարակութեան մղած կռուի ահռելիութեան ու մեծութեան մասին)։ Օրգանական տեսութեան պաշտպանները մարդու վրայ տահասարակ նայում են զուտ կենդանական տեսակէտից և նրա հոգեկան աշխարհը կարծես միանգամայն մոռացութեան են տալի։ Անհատը այս ուղղութեան կարծիքով միայն բեհեի դեր ունի և զուրկ է ինքնուրոյնութիւնից. սակայն հասարակութեան զարգացումը այլ բան է ապացուցանում։

Նշանենք նաև մի հանգամանք, որ օրգանական զարգացումը աւելի նեղ գաղափար է բսահինքեան, քան հասարակութեան յառաջադիմութիւնը։ Օրգանական զարգացման մէջ առաւելապէս խնդիրը օրգանիզմի ֆիզիոլոգիական յատկութիւններին և ոյժերին է վերաբերում. իսկ հասարակութեան յառաջադիմութեան խնդիրը ընդգրկում է զրա հետ միասին և աւելի դեռ մեծ չափով քան այդ մարդու հոգեկան ոյժերի, հոգեկան յատկութիւնների զարգացումը։

Որքան էլ այս ուղղութեան ներկայացուցիչները հռչակաւոր անուններ են, բայց և այնպէս գիտական տեսակէտից նայելով խնդրին, զալիս ենք այն եզրակացութեան, որ հասարակութեան ինչ լինելը և ինչպէս զարգանալը այս տեսութեամբ ամբողջովին չի պարզաբանւում։ Այս ուղղութեան գլխաւոր

ներկայացուցիչն է Հերբերտ Սպէնսերը, որը այս խնդրի վերաբերմամբ բաւական զրուածքներ ունի։ Նշանաւոր են նաև Շեֆլէ, Լիլիէնֆէլդ, որոնք իրենց զրուածքներում հասարակութեան և օրգանիզմի համեմատութիւնը ծայրահեղութեան են հասցրել։

Օրգանական ուղղութեան պաշտպանած տեսութեան խիստ գիտական արժէքից զուրկ լինելը յայտնի է դառնում նաև նրանով, որ նախ այս տեսութեան առաջարկած օրէնքները չեն համապատասխանում արդէն իսկ զոյութիւն ունեցող այլ գիտական օրէնքների ճշմարտութեանը. երկրորդ, որ այդ տեսութեան առաջարկած միջոցներով տեղի ունեցած և ունեցող երևոյթների մեծագոյն մասը չեն բացատրւում։ Ցայտնի է սակայն, որ որքան ճշմարտութեանը աւելի մօտ է մի գիտական տեսութիւն, նոյնքան աւելի երևոյթներ է ընդգրկում նա և նոյնքան աւելի շատ երևոյթներ են պարզաբանւում այդ տեսութեան առաջարկած միջոցներով։ Այսպիսով օրգանական ուղղութիւնն էլ անզօր է երևում հասարակութեան ինչ լինելու և ինչպէս յառաջդիմելու պրօբլէմները լուծելու։

IV

Տնտեսական ուղղութիւն

Ահա մի ուղղութիւն, որը ներկայումս էլ դեռ խոշոր նուաճումներ է անում կարելի է ասել բոլոր կուլտուրական երկրներում յանձին քաղաքական կուսակցութեան։ Այս ուղղութեան հետևողների թիւը որքան օրէցօր քանակով աճում է, նոյնքան որակով թուլանում է։ Մի որոշ, պարզ ուղղութեան փոխարէն հանդէս են եկել բաւականաչափ հերձուածներ և ուղղափառների կողմից նզովեալների թիւը արագութեամբ աճում է։ Այս ուղղութեան ծննդեան ժամանակի պայմանները ուսումնասիրելով հասկանալի են դառնում այն ծայրահեղութիւնները, որոնք բնականաբար սպրդել են այդ վարդապետութեան մէջ և պատճառ են դարձել այդ ուղղութեան հետևողների մէջ բազմաթիւ տարաձայնութիւնների։

19-րդ դարու առաջին կիսում մարդկային հասարակու-

թեան իրաւակարգի փոփոխութեան համար մի շարք մեծ ու փոքր յեղափոխութիւններ եղան, որոնք սակայն չկարողացան իրենց վերջնական նպատակին ծառայել։ Լուրջ դիտողները և խնդրով խորը հետաքրքրուողները նկատեցին, որ միայն իրաւական հաւասարութեամբ հասարակութիւնը չի կարող ազատուել անհաւասար դրութիւնից, որ այս նպատակին հասնելու համար ամենամեծ խոչնդոտը հանդիսանում է գոյութիւն ունեցող տնտեսական անհաւասարութիւնը և ուրեմն պէտք է մաքառել այս չարիքի դէմ։ Այս ուղղութեամբ սկսուեցին մի շարք ուսումնասիրութիւններ ու կազմակերպութիւններ երևան գալ, որոնք և հիմք դարձան հասարակութեան կազմի և հաւասարութեան հասնելու օրէնքները տնտեսական հիմքերով բացատրող ուղղութեան առաջ գալուն։ Այս ուղղութեան մէջ պէտք է առանձնապէս ուշք դարձնել մի հանգամանքի վրայ, որը մեծ չափերով ազդել է տնտեսական վարդապետութեան միակողմանիութեան և դոգմատիկ դառնալու վրայ։ Ցայտնի է որ այս ուղղութեան հիմնադիրները իրենց կեանքի ընթացքում եղել են քաղաքական կուսակցութեան հիմնադիրներ, քաղաքական գործիչներ և աշխատել են որքան կարելի է իրենց պաշտպանած քաղաքական պահանջները և ծրագիրները հաստատուն, գիտական հիմքերի վրայ դնել։ Այն հանգամանքը, որ գիտական որևէ ուղղութիւն ոչ թէ աւելի շուտ ճշմարտութիւնը որոնելուն է հետևում, այլ մի տեսակ գործադրում է յօգուտ քաղաքական որոշ խնդիրների կուսակցական տեսակէտից բացատրելուն, արդէն իսկ այդ ուղղութիւնը զրկում է գիտական ածականը կրելու իրաւունքից։ Ոչ թէ ճշմարտութիւնը ըստ ինքեան, որը կապ չունի վնասակար և օգտակար դաղափարների հետ անմիջապէս, ելակէտ է այս դէպքում այս ուղղութեան հետևողների համար, այլ միայն որոշ քաղաքական շահերի որոշ օգուտների արտայայտումն է կէտ նպատակը։ ոչ թէ ճշմարտութեան համար աշխատել կնշանակէ այս, ճշմարտութիւն, որ շատ անգամ միայն գոյութիւն ունեցող ձևերին հակառակ է լինում, այլ որոշ դասակարգի և խմբակցութիւնների օգտին։

Կուսակցական ուղղութիւնը ցատագովելու ու հիմնաւորելու միակողմանի աշխատանքից հետևում է և այն թերութիւնը, որ աչքի է ընկնում տնտեսական ուղղութեան հետևողների գրուածքներում։ Այս ուղղութեան հիմնադիրները իրենց գրուածքներում չեն մշակել մի որոշ փիլիսոփայական սիստեմ, նոքա չեն տուել դիտութիւնների համակարգութիւնը, որով պարզուէր իւրաքանչիւր գիտութեան տեղը և արժէքը հասարակութեան ուսումնասիրութեան խնդրում։ Մինչդեռ նախկին երկու ուղղութիւններն էլ (մտաւորական և օրդանական) ունին փիլիսոփայական որոշ սիստեմ, այստեղ, շնորհիւ այն հանգամանքի, որ գրուածքները մեծ մասամբ կուսակցական շահերի չորս կողմն են պտտուել, մեծ մասամբ անորոշ և ցրուած տեղեկութիւնների ենք հանդիպում։ Այս է պատճառը, որ երկու գլխաւոր հիմնադիրների (Կ. Մարքս և Ֆ. Էնդելս) մահուանից յետոյ միայն նրանց աշակերտ հետևողները աշխատել են հետզհետէ լրացնել թերի մնացած խնդիրների պակասը։ այս դէպքում էլ շատերը ընկել են այնպիսի ծայրահեղութիւնների մէջ, որ սառնարիւն գիտական մտածողների համար այլ ևս անկարելի է եղել այդ ուղղութեան մէջ մնալ և դուրս են եկել ու կազմել նոր տնտեսական ուղղութիւն։ Ոչ միայն որոշ գիտական համակարգութիւն, այլ և ինքնուրոյն մեթոդ, ուսումնասիրութեան յատուկ եղանակ չունի այս ուղղութիւնը և շատ անգամ պատմական, հասարակական երևոյթները քննելու, վերլուծելու դէպքում տարբերուում է դանադան մեթոդների ընտրութեան մէջ։

Գալով այս ուղղութեան հիմնական դրդապատճառներին, պէտք է նկատել, որ՝ շնորհիւ այս ուղղութեան քաղաքական կուսակցութեան կերպարանք ստանալուն, ընդարձակուել են և մեծ մասամբ լուրջ խնդիրներով հետաքրքրուողներին ծանօթ են, այնպէս որ աւելորդ կլինէր մանրամասն յիշատակել նրանց, բաւականանանք այստեղ միայն ամենագլխաւորները յիշելով։

Այս ուղղութեան համաձայն հասարակութիւնը կազմուած է դասակարգերից, անհատը հասարակութեան զարգացման մէջ դեր չի խաղում, այլ միայն դասակարգն է իսկական գործօնը։

Ուշադրութիւն դարձնենք նախ այն հանդամանքի վրայ, որ ոչ իրենք, այս ուղղութեան հիմնադիրները և ոչ էլ նրանց աշակերտ հետևողները որոշակի չեն սահմանաւորել դասակարգ գաղափարը. յայտնի է, որ այս խնդրի առթիւ դեռ մինչև այսօր էլ տնտեսագէտների մէջ համաձայնութիւն չկայ։ Միւս կողմից երբ ի նկատի ենք ունենում պատմութիւնը, ժողովրդագրութիւնը և հնարանութիւնը, տեսնում ենք, որ նախնական հասարակութիւնների մէջ, երբ դեռ կեանքը չէր բարդուել, երբ աշխատանքի բաժանում ու միութիւն տեղի չէր ունեցել, երբ մարդկանց հոգևոր և մտաւոր հորիզոնները նեղ սահմանների մէջ էին, դասակարգեր փնտրելը առնուազն անմտութիւն է եթէ ոչ աւելին։ Հասարակութեան յառաջադիմութեան և շերտաւորման շնորհիւ միայն առաջ են գալիս մարդկանց շահերի տարբերութիւններ և ընդհարումներ. բայց չէ՞ որ շերտաւորումից առաջ տեղի է ունենում հասարակութեան անդամների միութիւնը, որը և նպաստում է հասարակութեան ամուր կապակցութեան և կազմակերպութեան, իսկ միութեան դէպքում դասակարգերի բաժանումն նկատել հասարակութեան մէջ աւելի քան պատմական և տրամաբանական սխալ է։ Պէտք է խոստովանել, որ հասարակութեան ինչպէս կազմուելու և ի՞նչ մասերից կազմուելու խնդիրը այս ուղղութիւնը չի մշակել առանձնապէս. իսկ եղածն էլ, ինչպէս տեսնում ենք, թերի է և պատմական անճշտութիւն ունի իր մէջ։

Հասակութեան զարգացման օրէնքը ըստ այս ուղղութեան պէտք է փնտրել հասարակութեան մէջ իշխող տնտեսական պայմանների մէջ. տնտեսական պայմաններն են այն հրամայական օրէնքները, որոնք ղեկավարում են հասարակութեան ընթացքը։ Այդ պայմանները հասարակութեան մէջ ապրող, գործող դասակարգերից կախուած չեն և չեն ենթարկուում նրանց, ընդհակառակը նրանք անկախ վիճակ ունեն և հրամայողական բնոյթ։ Հոգեկան աշխարհը, կուլտուրան, մտաւոր զարգացումը ամբողջապէս տնտեսական պայմաններից առաջ եղող, նրանց ենթարկուող երևոյթներ են։ Տնտեսական դրութիւնը ինքը իր հերթին մի տեսակ անխուսափելիութեան է ենթակայ,

նրա մէջ իշխում է ինչոր immanent ոյժ, որը ստիպում է տնտեսական դրութեանը զարգանալ, առաջ գնալ միայն այն ուղղութեամբ, որը հաճելի է այդ անյայտ ոյժին։ Պարզ դաղափար կազմել «տնտեսական դրութիւն» գաղափարի, նրա մէջ գործող անյայտ ոյժի և երկուսի միմեանց հետ ունեցած յարաբերութեան մասին աւելի քան դժուար է, որովհետև մատերիալիստ փիլիսոփաները իրենց հիմնական գաղափարները բացատրելու դէպքում ստիպուած ընկել են մետաֆիզիկայի մէջ։ Քանի որ իրերի և դրութիւնների տէրն ու տնօրէնը տնտեսական դրութիւնն է, ուստի մարդ անհատը հասարակութեան զարգացման խնդրում ոչ մի դեր չունի, բայց եթէ մի գործիքի, մի միջոցի, որին տնտեսական պայմանները այնպէս են ծառայեցնում, ինչպէս այդ իրենց հաճելի է։ Զարգացումն ըստ ինքեան տեղի է ունենում պայքարի շնորհիւ միայն. պատմութիւնը դասակարգային կռիւ է, լոզունգի անխուսափելի հետևանք է ընդունել հասարակութեան զարգացումը իբրև մի մշտական և անհրաժեշտօրէն տեղի ունենալիք կռիւ։

Միջանկեալ նկատեմ, որ թէ որքան տնտեսական պայմաններն են միշտ ծնունդ տալիս հասարակական բոլոր երևոյթներին, այս մասին աւելի քան գրուած ու խօսուած է. միայն մի օրինակով բաւականանանք պարզելու այդ դատողութեան ճշմարտութիւնը։ Երևոյթների առաջ գալու և հասարակական միջավայրի կապը յայտնի է. բայց միջավայրը չի նշանակում միայն տնտեսական պայմանների գումարը. երկու գաղափարները միմեանց չեն ծածկում. տնտեսականը միայն մի մասն է ամբողջի։ Միջավայր ասելով մենք հասկանում ենք ի թիւս այլ պայմանների նաև բնութիւնը, շրջապատող բնական պայմանները, որոնց ազդեցութիւնը դժուար թէ տնտեսական ուղղութեան հետևողները ժխտեն։ Միւս կողմից նրանք պէտք է խոստովանեն, որ իրենց գործածած տերմինը՝ տնտեսութիւնը, դեռ չի ներփակում իւր մէջ բնութիւնը, բնական պայմանները։ Զելիգմանը ցոյց է տալի, որ Լիւսերը նպաստել է կօնտրապունկտը ներդաշնակութեան վերածելուն, բայց այդ դեռ չի նշանակում, որ այդ փոփոխութիւնը անհրաժեշտ պատճառա-

կան կապ ունէր վերածնութեան ժամանակի տնտեսական պայմանների հետ։ Աւելի անհասկանալի է կապ գտնել երաժշտութեան մէջ ֆուգան մացնելու և կապիտալիզմի զարգացման ու դասակարգային կռւի մէջ, կամ Շօպէն ու Շուբերտի թախծամած երգերի ու ժամանակաւոր հակայեղափոխական շարժման յաղթանակի մէջ։ *)

Այս է այս ուղղութեան ամբողջ ուղն ու ծուծը, որի մէջ դժուար է փնտրել գիտական անաչառութիւն և ճշմարտութիւն։ Ըստ այս ուղղութեան մտածողների հասարակութիւնը, անհատը և հասարակական բոլոր երևոյթները ներփակւում են տնտեսական դրութեան մէջ, մինչդեռ առանց կանխակալ կարծիքի նայողի համար պարզապէս նկատելի է, որ հասարակութեան զաղափարը աւելի քան ընդարձակ է և տնտեսական դրութիւնը նոյնպէս մի տարր է այդ ամբողջութեան մէջ, ինչպիսի են իրաւական, բարոյական, կրօնական և այլ տարրերը։ Միւս կողմից այդ ուղղութեան հետևողների համար տնտեսական երևոյթները մի տեսակ անկախ դրութեան մէջ են և կարծես հասարակութիւնից դուրս են. չէ՞ որ սակայն այդ տնտեսական գործօն ոյժը ինքը իւր ամբողջ մանրամասնութիւններով մարդկանց մէջ է միայն դեր խաղում և նրանց շնորհիւ է առաջ եկել. չլինէր հասարակական կազմը, ի՞նչպէս և ո՞րտեղից պէտք է առաջանային այդ տնտեսական երևոյթները. հասարակութիւնը ինքն է առաջ բերում նրանց. նրա մէջ են կատարւում այդ երևոյթները և նրա շնորհիւ։ Աւելացնենք սրա վրայ և այն, որ իւրաքանչիւր երևոյթ առհասարակ հասկանալի է դառնում և ոյժ է ճանաչւում այս կամ այն չափով միայն այն ժամանակ, երբ նա դառնում է մարդկային հոգու մտածողութեան նիւթ, երբ նա հոգեկան աշխարհում վերլուծութեան է ենթարկւում, պարզ է ուրեմն, որ տնտեսական երևոյթները իրենք ոչ թէ հոգեկան աշխարհից անկախ են և նրանից դուրս, այլ միայն նրա միջոցով են հասկանալի դառնում և որև է արժէք ստանում։ Քանի դեռ հասարակութեան անդամների մէջ չկայ հոգեկան, մտաւոր հաղորդակցութիւն, քանի դեռ զաղափարների ըմբռնողութիւնը պակաս է, չի կարող տեղի ունենալ որևէ երևոյթ, որը ճանաչուի ոյժ կամ որին հնարաւոր լինի որակել. միայն հոգեկան աշխարհի արթնացումով և զարգանալովն է հնարաւոր դառնում այս արժէքաւորումը երևոյթների։ Այս տեսակէտից հէնց այդ ուղղութեան մտածողների խօսքերը, դասակարգային գիտակցութեան արթնացումն և կամ նոյնութիւնը, հասկանալի են դառնում միայն, երբ ի նկատի ենք ունենում հոգեկան աշխարհի դերը. այլապէս ոչ մի տնտեսական երևոյթ անկախ վերցրած չի կարող ոյժ դառնալ հասարակութեան համար և դեր խաղալ յառաջադիմութեան մէջ։

Հետաքրքիր է այժմ ուշը դարձնել այն հանգամանքի վրայ, որ ըստ այս ուղղութեան հասարակութեան զարգացումը անխուսափելիօրէն միայն մի ուղղութեամբ կարող է լինել և ոչ այլ ուղղութիւններով։ Այս դատողութեան մէջ տեսնում ենք մի տեսակ պատճառ ու հետևանք զաղափարների շփոթումն ու թիւր հասկացողութիւն։ Ինչպէս տեսանք, տնտեսական պայմանները հասարակութիւնից դուրս չեն գտնւում, այլ նրա մէջ են և մարդու հոգու շնորհիւ միայն հասկանալի։ Ի՞նչպէս ուրեմն այս պայմանները ինչոր անհրաժեշտութիւն են դառնում հասարակութեան համար. ի՞նչպէս նրանք մեզանից անկախ են գործում և մեզ ստիպում են այսպէս կամ այնպէս առաջ գնայու։ Յայտնի է, որ մենք դրսի առարկաների մէջ չենք գտնում ըստ ինքեան ինչոր պատճառի օրէնք, որ օրիեկտների մէջ որևէ սինտէզ տեսնել անկախ սուբիեկտից անհնարին է. այն կապը, որ մենք տեսնում ենք առարկաների մէջ, այն օրէնքը, որին մենք ասում ենք պատճառականութեան օրէնք, բստինքեան իրերի մէջ չէ գտնւում, այլ մենք ենք վերագրում այդպիսի օրէնք առարկաներին և երևոյթներին. սա միայն մեր մտածողութեան արդիւնք է։ Քանի որ պատճառականութիւնը միայն երևոյթների այս կամ այն ձևով հասկանալու մի եղանակն է, որը մարդկային հոգուն է յատուկ և նրանից է բղխում, նրա

---

*) Տես М. Ковалевскій: Современные соціологи. 320 եր.

հետ միասին զարգանում և փոփոխւում, արդեօք հնարաւոր է իրերին իրենց և երևոյթներին մի ոյժ վերագրել, որը ոչ միայն մեզ հասկանալի չէ, այլ և մեզ չի ենթարկւում, աւելացրէք և այն, որ դեռ մեզ էլ կառավարում է։

Պատճառականութիւնը միայն մարդկային հոգու արդիւնք է. այդ օրէնքն էլ հոգեկան զարգացման հետ փոփոխւում է. սխալ է ուրեմն անտեսական երևոյթների մէջ ինչոր պատճառականութիւն փնտրել անկախ մեր հոգեկանից և նրան վերագրե անխուսափելիութեան ոյժ։ Այս անխուսափելիութիւնը յետոյ այս ուղղութեան հիմնադիրներից մէկը (Էնդելս) մեղմացրեց նրանով, որ նա վերապահելով տնտեսական դրութեանը առաջնութեան պատիւը թոյլ տուեց, որ անհատը իբրև տատմայր հանդէս գայ որևէ երևոյթ առաջ գալու դէպքում։ Այսպիսով հէնց իրեն բերանով մեծ հեղինակը խախտում է իւր դաւանած օրէնքը. եթէ մի օրէնք երկաթ է և նրան փոխել չի կարելի, էլ ի՞նչ արժէք ունի տատմայր հրաւիրել. իսկ եթէ տատմայրը կարևոր է, նա ուրեմն մի բան կարող է փոխել. օրինակ ծննդաբերութեան ցաւերը թուլացնել, որ նշանակում է թէ երևոյթը այնպէս չի կատարւում, ինչպէս որ այդ բնական ոյժն է պահանջում։ Երբ օրէնքի մէջ փոփոխութիւն կարելի է մտցնել, այդ օրէնքը անհրաժեշտութեան ոյժ չունի այլևս։

Ամեն ինչ հասարակական կեանքում վերագրելով տնտեսական երևոյթներին, այս ուղղութեան հետևողները անհատի դերը զրոյի են հաւասարեցնում։ Բայց թէ իրական կեանքը և թէ գիտական ուսումնասիրութիւնը ապացուցանում են, որ այդ մտածելակերպը և սխալ է և նոյնիսկ վնասակար։ Բաւական է յիշել գերմանական, ֆրանսիական և այլ երկրների այս ուղղութեան հետևող քաղաքական կուսակցութիւնները, նրանց աշխատանքը, թէ խօսքով, թէ գրչով, նրանց ահագին դրամական ծախքերը դաղափար կազմելու համար, թէ որքան այս ուղղութեան առաջնորդները հեռացել են իրենց դաւանանքից։ Եթէ յիրաւի անհատը ոչինչ անել չի կարող, ինչո՞ւ համար են այդ բոլոր ջանքերը և հալածանքները, որ այնպէս սիրով շատ

անգամ յանձն են առնում այդ ուղղութեան քարոզիչները։

Գիտական տեսակէտից նայելով խնդրին պէտք է ասել, որ իրերի մէջ ըստ ինքեան նպատակ չենք տեսնում և ոչ մի գիտութիւն չի կարող ասել թէ իրերի միտքը, նպատակը այս է կամ այն։ Գիտութիւնը կարող է միայն իրերի կապակցութիւնները ուսումնասիրել և ոչ թէ տալ նրանց միտք, նպատակ, որ հէնց իրենցից, իրերից բղխէին։ Այս դէպքում աւելի շատ հաւատքը, բարոյական հասկացողութիւնն է դեր խաղում։ Եթէ մարդ իրերի երևոյթների մէջ նպատակ է դնում, ծգտում նրանց արժէքաւորել իբրև լաւ և վատ, օգտակար և անօգուտ, նա այդ անում է շնորհիւ իւր բարոյական հասկացողութեան։ Գիտութիւնը տալիս է, ինչ որ կայ, իսկ բարոյականութիւնը այն, ինչ որ ցանկալի և պէտք է որ լինի։ Գիտութիւնը ասում է, որ մի բան կատարւում է, որովհետև այս ինչ պատճառները և հանգամանքները դրդում են այդպէս, իսկ բարոյականութիւնը աւելացնում է, որ մի բան կատարւում է, որպէսզի այն այնպէս լինի. այսինքն որ մի ցանկալի բան տեղի ունենայ։ Տրնտեսական վարդապետութեան հետևողները իրենք ոչ թէ սիրուած են կատարել այս կամ այն, այլ նոքա էլ ծգտում են, որ մի բան լինի, որը իրանց ցանկալի է և նպատակն է իրենց աշխատանքի։ Ոչ թէ օբիեկտիւ երևոյթներն են դեր խաղացողը այս ուղղութեան երևոյթների աշխատանքում, այլ սուբիեկտիւ ծգտումները, այսինքն բարոյական օրէնքներ. իսկ բարոյական օրէնքները գիտականօրէն երբէք չեն ապացուցւում, քանի որ նրանք ոչ իրերից և ոչ էլ երևոյթներից են անմիջապէս բղխում։ Այսքանը բաւական է կարծեմ պարզելու, որ տնտեսական ուղղութիւնը հասարակութեան ինչ լինելու և ինչպէս առաջ գնալու խնդիրների պարզաբանութեան համար կիսատ և միակողմանի բացատրութիւններ է տալիս։

Ինչ վերաբերում է անհատի դերին հասարակական կազմի և երևոյթների մէջ, այս մասին աւելի ընդարձակ խօսք կլինի հետևեալ գլխում, իսկ այստեղ միայն մատնանիշ կանեմ երկու փաստ, ցոյց տալու համար, որ անհատը ունի իւր ուրոյն տի-

պը հասարակութեան մէջ շնորհիւ իւր կամքի ազատութեան։ Այդ երկու փաստերն են—նախ պատժական օրէնքների գոյութիւնը և երկրորդ մանկավարժութիւնը։ Պատժական օրէնքների գոյութիւնը ըստ ինքեան ապացոյց է, որ անհատը իւր գործելակերպի մէջ որոշ չափով ազատ է, որ նա գործիք չէ հասարակութեան ձեռքին և ոչ էլ պայմանների խաղալիք, այլապէս մենք իրաւունք չենք ունենայ յանցաւորի և ոչ յանցաւորի մասին խօսելու։ Եթէ անհատը միայն դրսի, հասարակական պայմանների արդիւնք է, էլ ի՞նչպէս և ի՞նչ օրէնքով պէտք է նրան պատժել, չէ՞ որ նա մեղաւոր չէ. իսկ եթէ մենք այնուամենայնիւ մարդասպանին, գողին պատասխանատուութեան ենք կանչում, ապա մենք նրա մէջ տեսնում ենք որոշ անկախութիւն, ինքնուրոյնութիւն։ Այստեղ արժէ յիշել Գ. Զիմմելի խօսքը, թէ եթէ մի կողմից հասարակութիւնը պատասխանատու է անհատի համար, միւս կողմից էլ չէ՞ որ անհատը իւր յանցանքով հիմք է դառնում ապագայում գործողների համար. նա էլ իւր յանցանքն է ժառանգութիւն թողնում, որով իւր յաջորդներին վատ ժառանգութիւն է թողնում, ուրեմն նրան ևս առաւել պէտք է պատժել։ *) Մանկավարժութիւնն էլ միւս կողմից ապացոյց է, որ մարդ կարող է և ընդունակ է իւր ուղածին պէս որոշ չափով թեքել, ուղղել կրթուող սերնդի միտքը, հոգին։ Եթէ մարդ ազատ չլիներ, հնարաւո՞ր էր արդեօք նրա միտքը, կամքը այս կամ այն կերպ կրթել. եթէ մարդը ամբողջապէս դրսի, օտար պայմանների է ենթակայ, ապա նրան չէր կարելի փոխել ոչ մի կերպ, միայն ազատ կամքն է որ ընդունակ է ճկելու, թեքելու։ Այս երկու խոշոր երևոյթները բաւական են ապացուցանելու, որ անհատը իւր կամքի շնորհիւ ազատ է շատ դէպքերում հասարակական պայմանների «անհրաժեշտութեանը» ենթարկուելուց և նա կարող է որևէ հասարակական խնդրում բռնել իւր ցանկալի ուղղութիւնը։ Թող յիշեն այդ ուղղութեան հետևողները իրենց երկու մեծ ուսուցիչներին, հասկանալու համար թէ անհատը յիրաւի՞ դեր ունի հասարակական կեանքում, թէ նա միայն մի անշունչ գործիք է։

*) Г. Зиммель, Соціологія дифферн. եր. 65.

V

Հոգեբանական ուղղութիւն

Իւր խորութեամբ, ընդարձակութեամբ և բազմազան ուսումնասիրութիւններով ամենից աչքի ընկնող ուղղութիւնը հասարակութիւնը հոգեբանական տեսակէտից ուսումնասիրող ուղղութիւնն է։ Վերջինս իր հերթին ունի բաւական խոշոր իրարից, ըստ էութեան, տարբերուող ստորաբաժանումներ, որոնք խնդրին մօտենում են միայն մի կողմից, աչքից բաց թողնելով միւս կողմերը։ Այս ստորաբաժանումները միմեանց դէմ չեն և իրար չեն հերքում, աւելի շուտ լրացնում և ամբողջացնում են։ Այն հանգամանքը, որ խնդրի ուսումնասիրութեան համար այս ուղղութեան մէջ առաջ են եկել բաւական խոշոր ստորաբաժանումներ ցոյց, է տալի, որ հարցը մի ճանապարհով չի կարելի լուծել, այլ տարբեր ճանապարհներով, քանի որ հարցը ինքը բարդ է և բազմակողմանի։

Այս ուղղութեան հետևողները ընդունում են, որ սոցիոլոգիան մի առանձին, անկախ գիտութիւն է, որը ուսումնասիրում է հասարակական կաղմը և հասարակութեան զարգացումը։ Առանց հասարակական օրէնքների չէր կարող սոցիոլոգիան իբրև ուրոյն գիտութիւն գոյութիւն ունենալ. եթէ հասարակական երևոյթների մէջ չեն իշխում օրէնքներ, եթէ հասարակութիւնը իւր զարգացման ընթացքում քմահաճոյքների է միայն ենթակայ, ապա սոցիոլոգիային աւելորդ կլիներ գիտութեան անունը տալ։ Կարևոր է շեշտել սակայն և այն, որ գիտութիւնը զբաղւում է ոչ թէ միշտ պարզը, ակնյայտնին որոնելով, հետախուզելով, այլ նաև ուշը է դարձնում հաւանականի վրայ. եթէ միայն ակնյայտնին, ճշգրիտը գիտութեան նիւթ լինէր, այն ժամանակ գիտութիւններից շատ շատերը, եթէ ոչ մեծագոյն մասը, սոփուած կլինէին իրենց գոյութեան վրայ խաչ քաշել։ Ցաւանի է, որ ոչ մի գիտութիւն ընդհանրապէս առանց տեսութիւնների, ենթադրութիւնների գոյութիւն չունի. օրէնքները և հաւանական ենթադրութիւնները իրար կողքի առաջ են գնում և նպաստում են գիտու-

թեան առաջ դնալուն։ Այս հանգամանքը մեծ դեր է խաղում հոգեբանական ուղղութեան մէջ և նպաստում է աւելի ևս միահամուռ ջանքերով աշխատել ու սոցիոլոգիայի մէջ տեսութիւնները հաւանականութեան վերածելու, որ յետոյ էլ օրէնքներ կարողանան հանել։

Սոցիոլոգիան այս ուղղութեան համածայն իւր ուշքն է դարձնում ոչ միայն հասարակութեան կազմակերպութեան օրէնքների վրայ, այլ և աշխատում է ուսումնասիրել հասարակութեան զարգացման օրէնքները։ Այս դէպքում դրութիւնը վերջինիս մէջ տեղի ունեցող երևոյթների հետ միասին շաղկապուած է ինկատի առնում. դրութիւնը չի բաժանւում նրա մէջ տեղի ունեցող երևոյթից, քանի որ դրութեան անհրաժեշտ մասն է կազմում երևոյթը. առանց երկուսի շաղկապման, միացման անհասկանալի կլինի ամբողջութիւնը։ Գալով այն խնդրին, թէ ինչ է ինքը հասարակութիւնը, պէտք է նկատել, որ այս առթիւ տարբեր որոշումներ են արել. ամենից հաւանականն է իմ կարծիքով այն, որը ընորոշում է թէ հասարակութիւնը մարդկային անհատների միատեղ կեցութեան մի կազմակերպութիւն է, մասամբ գիտակցական։ Ամբողջութիւնը այսպիսով ազդում է իւր մասերի վրայ, բայց ամբողջն էլ իւր հերթին մասերի ազդեցութեանն է ենթակայ։ Հասարակութիւնը մի այժ է այս ուղղութեան համածայն, անհատականը ընդհանրացնող այժ. անհատական արտայայտութիւնները գաղափարները, մտքերը հասարակութիւնը տարածում է, ժաւալում և տալի հասարակական դոյն. այս դէպքում անհատականը դառնում է հասարակական։ Միւս կողմից ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ հասարակութիւնը իրար մօտ դրած անհատների մի գումար չէ, այլ նա այդ անհատների դէպի միմեանց և դէպի ամբողջութիւնը ունեցած յարաբերութիւնների մի անբաժան ամբողջութիւն է։ Այսպիսով ըստ այս ուղղութեան անհատական հոգեբանութեան կողքին գոյութիւն ունի նաև հասարակական հոգեբանութիւնը։ Հասարակական հոգեբանութիւնը իրրև առանձին այժ և տարբեր երևոյթ քան անհատականն է իւր հերթին ազդում է անհատականի վրայ։ Հասարակութիւնը այսպիսով մի կազմակերպութիւն է, որի մէջ տեղի ունին անհատական և հասարակական հոգեբանութեան երևոյթների ընդհարումներ և շաղկապումներ։ Այստեղից պարզ երևում է, որ անհատականը չի ժխտւում այս ուղղութեան մէջ, բայց և անհատին չի վերագրւում անպայման գերակշռող նշանակութիւն, այլ միայն ճանաչւում է նրա յարաբերական դիր հասարակական երևոյթներում։ Եթէ ըստ Սպէնսերի ասելու լինինք, հասարակութիւնը մի վեր-օրգանական կազմակերպութիւն է, քանի որ կան օրգանական և ոչ օրգանական կազմակերպութիւններ։ Հոգեբանական ուղղութիւնը իրրև առաջնորդող թէզ ընդունում է այն, թէ, ըստ Շոպէնհաուերի ասած, իւրաքանչիւր նիւթ միայն անհատի գիտակցութեան ձևակերպումն է։ մտածողութիւնն է, որ ձևակերպում է այս կամ այն ձևով հասարակութեանը իրրև փաստ և նրա երևոյթները իրրև զարգացման ազդանշաններ։

Եղել են ուսումնականներ, որոնք աշխատել են հասարակութեան կազմութեան համար մի նախապատճառ, կամ մի սկզբնական ատոմ դտնել (օրինակ Լ. Գումպլովիչ) բայց այս խնդրի նկատմամբ աւելի բեղմնաւոր ու խելոցի են թւում Մ. Կովալեվսկու առաջարկը «Սոցիոլոգիան մեծ օգուտ կստանար եթէ նա իւր անմիջական խնդիրներից հանէր այն հոդսը, որ պէտք է որոնել մի նախապատճառ և բաւականանար նրանով, որ համածայն հասարակական երևոյթների բարդութեան ու բազմազանութեան, պէտք է ցոյց տալ միաժամանակ և զուգահեռաբար գործող պատճառների ազդեցութիւնը և հակազդեցութիւնը հասարակական կեանքում»[1]։ Այսպիսով հասարակական կազմը ոչ թէ մի նախապատճառի, մի գլխաւոր այժի արդիւնքն է համարւում, այլ շատ պատճառներից, որոնք կարող են միաժամանակ և լաւ և վատ ազդեցութիւն թողնել հասարակական կազմի և ընթացքի վրայ։ Այս պատճառներից ոմանք կարող են իրենց ազդեցութիւնը ուժեղացնել, սիրապատող հանդիսանալ և թուալ իրրև միակ այժ. սակայն ընդունել, որ այդ ժամանակաւոր գիտակցութիւն ստացած այժը նախա-

[1]) Տես М. Ковалевскій; Соврем. Соціологи եր. XIV.

պատճառ է և ընդմիշտ տիրապետող, կնշանակէ միակողմանի լինել և իրերի խորքը չթափանցել[1]։

Եթէ նոյնիսկ հնարաւոր լինի հասարակութիւնը վերլուծել, մասերի բաժանել, ինչպէս մի քիմիական մարմին վեր են լուծում, և հասնել վերջը միայն մի տարրի, այդ դեռ չէր նշանակի, որ այդ տարրը ևս իր հերթին չի կարելի աւելի ևս տարրերի վերածել կամ բաժանել։ Եթէ այժմ այդ տարրը մենք չենք կարողանում բաղադրիչ մասերի վերլուծել, այդ մեր դիտական միջոցների և պատրաստութեան անկարողութեանը և անկատարելութեանը պիտի վերագրել. այս դէպքում սարսափած քիմիայում դիմում են միայն մի հաւանական տեսութեան-տեսմի տեսութեան, որը իւր հերթին միայն մի ենթադրութիւն է և ոչ աւելի։ Հասարակական կեանքի շերտաւորումը հետզհետէ առաջ է բերում այժեր, որոնք այնքան են տարբերւում իրենց ծնող այժից, որ անհնարին է լինում այլևս մի կապ գտնել երկուսի մէջ. բայց որ զլխաւորն է այդ նոր այժերը սկսում են անկախ գործել հասարակութեան մէջ։ Վերցրէք մեր ժամանակի բարդ կեանքը, ուր դեղարուեստը, գրականութիւնը, բարոյականութիւնը, իրաւունքը առանձին առանձին այժեր են կազմում և շատ անգամ անկախ գործում են. այս բոլորի համար մի նախապատճառ որոնելը, այս այլապան երևոյթներին մի սաղմից հանելը միայն զուր, աշխատանքի դուռն է բաց անում ուսումնականների առաջ։ Քանի որ հասարակական կազմը իր վերջին էլակէտում անհատական և հասարակական հոգեբանութեան դումարն, իսկ հոգեկան աշխարհը, ըստ Վունդի, չի ներկայացնում մի ինչ որ մշտական բան, այլ նա մի գործողութիւն է, որը միշտ ձևափոխւում է, տպա պարզ է, որ այդ մշտական ձևափոխութեան մէջ մենք զորձ ենք ունենալու միշտ տարբեր երևոյթների, տարբեր պատճառների ու հետևանքների հետ։

Ինչպէս տասցինք սոցիոլոգիայի խնդիրն է, ոչ միայն հասարակական կազմն ուսումնասիրել, այլ նաև այդ կազմի զարգացման օրէնքները կամ հաւանական ենթադրութիւնները ու-

[1]) Տես М. Ковал. Совр. Соціологи էր. 286

սումնասիրել։ Այժմ դիմենք վերջին խնդրին, թէ ինչպէս է հասկանում հոգեբանական ուղղութիւնը հասարակական կազմի զարգացումը և անհատի դերը այս զարգացման մէջ ինչ տեղ է բռնում և ինչպէս։ Շնորհիւ ժողովրդագրութեան և մարդաբանութեան սոցիոլոգիան հնարաւորութիւն է տացել բազմաթիւ նախապատմական, վայրենի տպա և կուլտուրական ու պատմական հասարակական ձևերը համեմատել և տեսնել, որ հասարակութիւնը ժամանակի ընթացքում զարգանում է։ Զարգացման փասը ակներև է, հարկաւոր է այս փասը հասկանալ և բացատրել։ Նախ նկատենք, որ զարգացում և յառաջադիմութիւնը հասարակութեան և օրգանիզմի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնների հոգեբանական ու բարոյական տեսակէտից քննուած սուբիեկտիվ հասկացողութիւն է միայն։ Մարդկային հասարակութեան մէջ նկատելի է մի զարգացում, որը նրան տալիս է նոր միջոցներ գոյութեան կռիւ մղելու, ոչ իւր մերձաւորների և իւր նմանների դէմ, այլ շրջապատող բնութեան դէմ. այդ զարգացումը մարդուն տալիս է հոգեկան նոր այժեր չմաքառելու իւր մերձաւորի դէմ, իսկ հասարակական կազմին տալիս է այնպիսի կազմակերպութիւն, որով այդ կռիւը մերձաւորի, ընկերի դէմ ըստ ինքեան աւելորդ և անհասկանալի է դառնում[1]։ Զարգացման հնարաւորութիւնը առաջ է գալիս միայն այն ժամանակ, երբ գիտակցական գործունէութիւնը գերակշռող դեր է ձեռք բերում անգիտակցականի վերաբերմամբ[2]։ Այս դէպքում առաջ է գալի գիտակցականի և անգիտակցականի ընդհարումն և միայն այդ պայքարից յետոյ տեղի է ունենում յառաջադիմութիւն։ Քանի որ իդէան, իբրև այդպիսին, իբրև գիտակցութեան արտայայտութիւն ըստ ինքեան իւր հանդէս գալով մի գործողութեան սկիզբն է դնում, հասկանալի է ուրեմն, որ իդէաների փոփոխութիւնը կեանքի մէջ փոփոխութիւններ է առաջ բերում և միւս կողմից կեանքի փոփոխութիւնն էլ իւր հերթին առաջ է բերում նոր իդէաներ։

[1]) Տես Карѣевъ Введ. в. изуч. Соц. 286 էր.

[2]) Տես М. Ковал. Совр. Соціологи էր. 428.

Հասարակութեան զարգացման մէջ մենք տեսնում ենք անհատի հետզհետէ ազատագրուելը հասարակութեան ամբողջութիւնից հոգեպէս. հասարակական կազմի ամբողջ ոյժը թուլանում է անհատի հոգեկան աշխարհի վրայ, մեծ ազդեցութիւն թողնելուց. այս դէպքում ձգման առարկայ դառնում է ազատ ցանկութեամբ համախմբուած ու կազմակերպուած մարդկային հասարակութիւնը։ Աւելորդ է ասելն անգամ, որ սոցիալական խնդիրը վերջնականօրէն վճռել, տալ մի վախճանների վախճանը արտայայտող բացատրութիւն անհնարին է. այդ կնշանակէր կեանքի գոյութիւնը կանգնեցնել, մինչդեռ քանի կեանքը կայ, որը մի ոյժ է, նա զիմադրութեան պիտի հանդիպի, այլապէս նա ոյժ չի լինի, իսկ զիմադրութիւնը ծրգտման, պայքարի ազդանշանն է։

Յիշենք կողմնակի, որ ժամանակակից սոցիալիստական ուղղութիւնը այս տեսակէտից մի տեսակ մեղանչում է զիտութեան ու ճշմարտութեան դէմ, կարծելով որ մարդկանց բաղդաւորութիւնը վերջնականապէս սոցիալիզմի իրականացումով տեղի կունենայ և որ այդ իրականացումը սոցիալիզմի արդարացի և ճշմարիտ լինելը կապացուցանի։ Հարկաւոր է յիշել, որ մարդկութիւնը միշտ ունեցել է և կունենայ իւր «ոսկէ դարի» իդէալը և որ սոցիալիստական հասարակութիւնն էլ կունենայ իւր «ոսկէ դարի» տենչը. սոցիալիզմն էլ մարդկային հասարակութեան զարգացման ընթացքում մի էտապ է։ Եթէ սոցիալիզմն իրականանայ էլ զանազան ձևափոխութիւններ, յաւելումներ ու յապաւումներ կրելուց յետոյ, այդ դեռ չի նշանակի, որ նա իրաւացի և արդար էր. քանի որ իրողութիւնը, իրականանալը և ճշմարտութիւնը հաւասարազօր զաղափարներ չեն։ Շատ երևոյթներ են եղել կեանքում, այդ դեռ չի նշանակում ի հարկէ թէ դրանք ճշմարտութեան արդիւնքներն են։

Ինչպէս ասացինք, հասարակական զարգացման մէջ նկատելի է անհատի հետզհետէ անջատումը կամ ազատագրումն հասարակական ոյժից. անհատը իր ամբողջութիւնը աւելի է մեծացնում։ Աշխատանքը անհատի օրգանների մէջ աւելի է

մեծանում իսկ անհատների իրենց մէջ պակասում է (Михайловскій). Ի հարկէ անհատը հասարակութեան բաղադրիչ մասն է, բայց նա բան ինքեան մի հոգեկան միութիւն է։ Անհատը բնորոշելիս մենք չենք արձանագրում միայն նրա գոյութեան փաստը, այլև տալիս ենք նրան որևէ գնահատութիւն. մինչդեռ օրգանիզմը բնորոշելու դէպքում մենք միայն արձանագրում ենք փաստը, առանց որևէ արժէքաւորման։ Պարզ է, որ անհատին և օրգանիզմին ոչ մի դէպքում նոյնացնել չի կարելի։ Որքան և հասարակութիւնն ու անհատը միմեանց հետ անմիջական յարաբերութեան մէջ են գտնւում, միմեանց լրացնում և պայմանաւորում են, այնուամենայնիւ անհատը ունի իր որոշ ազատութիւնը, որով նա հնարաւորութիւն է ստանում միջավայրի արդիւնք լինելով հանդերձ, իւր հերթին ազդել այդ միջավայրի վրայ, որոշ դէպքերում անկախ դեր խաղալ շնորհիւ իւր ունակութիւնների։ Թէ ի՞նչ է նշանակում անհատի ազատութիւնը, մասամբ կարելի է մատնանիշ անել պատմական անցեալը, երբ յիրաւի անհատը մեծ չափերով էր կլանուած հասարակութիւնից և մի տեսակ դուրկ էր ինքնուրոյնութիւնից։ Յիշենք մեր ներկան, երբ անհատը ինքնագիտակցութեան շնորհիւ կարողացել է բաւականաչափ ազատագրել իրեն թէ հասարակութիւնից և թէ մասամբ բնութիւնից։

Ոչ ոք չի կարող ժխտել, որ մեր մէջ գոյութիւն ունի «Ես»-ի զիտակցութիւնը. մի զիտակցութիւն, որով իւրաքանչիւր անհատ զգում է և համոզւում, որ ինքը տարբեր է մնացած բոլորից, որով նա զիտակցում է թէ ինքը մի ամբողջութիւն է, մի ինքնուրոյնութիւն, որի նմանը չկայ և չի եղել։ Այդ «Ես»-ի զիտակցութիւնը մի ապացոյց է անհատի ազատութեան և պատասխանատուութեան զիտակցութեան։ Այն հանգամանքը, որ մենք մեզ պատասխանատու ենք ճանաչում մեր գործերի համար, որ մենք զիտակցում ենք մեր որևէ արարքի մերը լինելը, մեզանից դուրս դալը, արդէն իսկ ազատութեան ապացոյց է։ Լինելով միջավայրի ազդեցութեան տակ և որոշ չափով նրա մնունդը, մենք այնուամենայնիւ զիտակցում ենք, որ մեր «Ես»-ը այլ բան է քան շրջապատը,

որ մեր «Ես»-ի տակ մենք հասկանում ենք տարբեր երևոյթներ, քան շրջապատն է. չլիներ այդ ազատութիւնը հասարակութիւնը չէր ունենայ անհատներ, այլ միայն մի զանգուած ըստ ամենայնի իրար նման օրգանիզմներից։ Բարոյական օրէնքների գիտակցութիւնը, երկրի և երևոյթների գնահատումն, արժէքաւորումն նոյնպէս ապացոյցներ են, որ մենք ունենք գործելու որոշ ազատութիւն, որ մենք միայն մի մեքենայ չենք, այլ որոշ դէպքերում նաև ստեղծագործողներ ենք։

Անհատի ազատութեան մասին խօսելիս չպէտք է մոռանանք, որ ազատութիւն ասելով մենք չենք հասկանում երևոյթների առանց պատճառների առաջ գալու մի հնարաւորութիւն։ Առանց պատճառների երևոյթներ չկան, այս ներկայումս մի աւելի քան տարածուած և ծամծմուած հասկացողութիւն է։ Եթէ սոցիոլոգիան չընդունէր պատճառականութեան օրէնքը, նա իբրև գիտութիւն գոյութիւն չէր կարող ունենայ, որովհետև ուր, այսպէս ասած, կամայականութիւնն է իշխում, այնտեղ օրէնքներ փնտրելը կամ ընդհանրացումներ, տեսութիւններ կազմելը անմտութիւն կլիներ, իսկ առանց վերջիններիս մի որևէ գիտութիւն անհասկանալի է։ Ազատութիւնը այս դէպքում պէտք է հասկանալ այս ձևով։ Վունդն ասում է, որ առհասարակ հոգեկան կեանքի էութիւնը կամքն է. նա ընդունում է, որ գիտակցութիւնը ու կամքը միմեանցից անբաժան են. մէկի զարգացմանը զուգահեռական գնում է և միւսին. ենթադրել գիտակցութիւն առանց կամքի անհնար է։ Սակայն կամքը հոգեկան կեանքում գերակշռող դեր է խաղում, ընթացք է տալի հոգեկան երևոյթներին։ Անհատի համար այսպիսով գերակշռող նշանակութիւն ունի կամքը։ Վունդը ընդունում է կամքի ազատութիւնը. ազատութիւնը, ասում է նա և մի որևէ էակի ընդունակութիւնը մտածուած ընտրութեամբ զանազան պատճառների մէջ իւր գործելակերպը որոշել, ուրիշ խօսքով, կամքի ազատութիւնը ոչ թէ կամքի սանձարձակութիւն է նշանակում կամ կամայականութիւնը, այլ որ եղած պատճառների մէջ, դրդիչ մոտիվների մէջ նա ընդունակ է ընտրութիւն անել, հետևել սրան կամ նրան, գերակշռութիւն տալ սրան և ոչ նրան, հետևել այս գործելակերպին և ոչ այն։ Այսպիսով պատճառականութիւնը մնում է իւր տեղը, միայն նա անխուսափելիութեան արժէք չունի. կամքը հնարաւորութիւն ունի ընտրութիւն անելու նրանց մէջ։ Այսպիսով յանձին Վունդի տուած կամքի ազատութեան բացատրութեան ստանում ենք անհատի ազատութիւնը հասարակական խնդիրներում. անհատը մեքենայի դերից դուրս է գալիս և մտնում է մեքենագործի դերի մէջ։ Այս տեսակէտից է, որ հասկանալի է դառնում անհատի և հասարակութեան, իբրև ուրոյն ոյժերի, յարաբերութիւնները և միմեանց փոխադարձաբար լրացնելը։

Հասարակութիւնը ինքը ոչ թէ տրամաբանական մտածողութեան արդիւնք է, այլ կամքի ներկայութիւն, ուրեմն որոշ չափով հասարակութիւնը ինքը ևս ազատ է իւր գործելակերպի մէջ։ Հասարակութիւնը իւր վեր-օրգանական հոգեբանութեան շնորհիւ է հասկանալի և քննութեան առարկայ. անհատական և հասարակական հոգեբանութիւնների ընդհարումները ու հաշտութիւնները կազմում են հասարակական կեանքի զարգացման ուղին։ Սոցիոլոգիան այս տեսակէտից դառնում է մի փիլիսոփայական գիտակարգ. նա տալիս է սոցիալական երևոյթների տեսութիւնը։

Եզրափակելով բոլոր վերոյիշեալ դատողութիւնները պէտք է ասենք, որ հասարակութեան գաղափարը մի հաւաքական գաղափար է, որ այս գաղափարը ճշգրիտ որոշել, կամ բացարձակ մի որոշում տալ անկարելի է։ Հասարակութեան զարգացման ուղին դնել ընդհանուր հրամայողական օրէնքների տակ, օրէնքներ, որոնք միակողմանի և կիսատ են, կնշանակէ սկսող մտածելակերպ ունենալ։ Նոյնքան թիւր հասկացողութիւն է անհատի խաղացած ուրոյն դերը չգնահատել այդ զարգացման մէջ։ Այս բոլորը ցոյց են տալիս, որ հոգեբանական ուղղութիւնը իւր տուած բացատրութիւնների մէջ հեռու է դոգմատիկ ուղղութիւնից և խորն ու բազմակողմանի է ընդգրկում երևոյթները քան միւս ուղղութիւնները։ Անշուշտ այս ուղղութիւնն էլ դեռ շատ խնդիրներ մութ է թողել և կան

հարցեր, որոնց համար բաւարար բացատրութիւններ չի տուէ, դեռ, բացի այն՝ որ դիտութիւն է, որ չունի դեռ չլուծուած պրոբլէմներ, դեռ ստիպուած չէ նորանոր տեսութիւններ տալ և աւելի հաւանական բացատրութիւնների դիմել: Խնդիրը ուրեմն ոչ թէ այս դէպքում առաջարկուած հարցի ըստ ամենայնի պարզաբանելն է, այլ այդ հարցի համար ընտրուած եղանակը, մեթոդը. այս տեսակէտից հոգեբանական ուղղութիւնը չիրաւի հարցը աւելի է պարզաբանում և աւելի ուղիղ միջոցներ է առաջարկում յետագայ ուսումնասիրութիւնների համար:

Զգիտեմ որքան է լինած յաջողուել միանգամից գաղափար տալ այս գրուածքում հասարակութեան ի՞նչ լինելու և ի՞նչպէս զարգանալու մասին. իբրև առաջին փորձ անշուշտ շատ թերութիւններ կլինեն մէջը, սակայն թւում է, որ ընթերցողը առնուազն մի գաղափար միշտ շեշտուած պիտի տեսնի, այն որ հասարակութիւնը ըստ ինքեան մի դիւրըմբռնելի երևոյթ չէ, յանուն որի կամ ընդդէմ որի կարելի լինի դուրս գալ և գործել, որ հասարակութեան ինչ լինելը հասկանալու համար հարկաւոր է երկար աշխատանք, ուսումնասիրութիւն և համոզմունք. առանց վերջինիս հասարակութեան մէջ յանուն հասարակութեան գործողը առնուազն անբարեխիղճ է, եթէ ոչ աւելին:

Ով համոզուած չէ գործում, ով գիտակցաբար չէ մօտենում հասարակութեանը, աւելի շուտ նա վնասակար է, քան օգտակար հասարակութեանը:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0037657